№ 182 ՀԻՆԳՇԱԲԹԻ ՕԳՈՍՏՈՍԻ 21

1908

ԵՐԵՍՈՒՆՎԵՑԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՀԻՆԳՇԱԲԹԻ ՕԳՈՍՏՈՍԻ 21 № 182

Տարեկան գինը 10 րուբլի. կէս տարվանը 6 րուբլի.
Առանձին համարները ԱՄԷՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.
Թիֆլիսում գրվում են խմբագրութեան մէջ.
Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція „Мшакъ"
Базарная ул. д. Тамамшева № 16.
կամ Tiflis, Rédaction „Mschak".
Տէլէֆօն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2
(բացի կիրակի և տօն օրերից)
Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով
Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ
Տէլէֆօն № 253.

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Երեքշաբթի, օգոստոսի 19-ին, Թոքերի բորբոքումից վախճանվեց Իծմաձէի Ջրաղացի 30 տարվայ աշխատաւոր-մշակ՝ Վասպուրականի Բերկրի գիւղից գաղթած

ՄՈՒՐԱԴ ԱՍԱՏՈՒՐԵԱՆ ՊԵՏՐՈՍԵԱՆԸ

որի մասին յայտնում են հանգուցեալի՝ հայրենիքում թողած հարազատներին և նրա յիշատակը յարգող Թիֆլիսի բարեկամներին իր քեռակին Սալօմէ Մանուկեան, հարսներ՝ Եղիսաբէթ Սարգսեան, Հռիփսիմէ Միքայէլեան, Հռիփսիմէ Յովակիմեան և քեռորդիք՝ Յարութիւն, Խաչատուր, Ենոք և Դանիէլ Վարդանեան Տէր-Ենօքեանցները։ Յուղարկաւորութիւնը տեղի կունենայ հինգշաբթի օրը, օգոստոսի 21-ին, Հալաբարի Մախաթսկայա փողոցի № 1 բնակարանից դէպի Էջմիածնեցոց ս. Գէորգ եկեղեցին, առաւօտեան ժամը 10-ին։ Թաղումը Խօջիվանքի գերեզմանատանը։ 1—1

Հաշւապահական եւ Գրասենեակային
ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ԿՈՒՐՍԵՐ
ԹԻՖԼԻՍԻ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԴՊՐՈՑԻՆ ԿԻՑ
(Իններորդ տարի)

Կուրսերում աւանդվում են. հաշւապահութիւն, առևտրական թղթակցութիւն, առևտրական օրէնսգիտութիւն և գեղագրութիւն։ Ցանկացողներին սովորեցվում է գրող մեքենայի վրա աշխատել։

Պարապմունքների սկիզբը սեպտեմբերի 15-ից 1908 թ.

Կուրսերը շարունակվում են ոչ պակաս 6 ամսից։ Պարապմունքները տեղի են ունենում երեկոները, շաբաթական երեք անգամ։

ՈՒՆԿՆԴԻՐ ԿԱՐՈՂ ԵՆ ԼԻՆԵԼ ԳՐԱԳԷՏ ԱՆՁԵՐ ԵՐԿՈՒ ՍԵՌԻՑ
Ամբողջ կուրսի վճարն է 40 րուբլի

Խնդիրները—Թիֆլիսի առևտրական դպրոցի դիրեկտորի անունով—ընդունվում են դպրոցի գրասենեակում՝ առաւօտեան ժամը 10-ից մինչև 12-ը։

Դպրոցի դիրեկտոր՝ Գ. Գեխտման
առ. (ապ.) (չ. շ.) 12—8

ԱՂՕՅԵԱՆԻ
Ռուսական բաղանիքներ
Զուղուրէթ, ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ դիմաց
Հեռախօս № 718.

Բաղանիքները բաց են առ. ժամը 6-ից մինչև գիշերվայ ժամը 12-ը։

Կան 11 նոմէրներ 80 կոպէկից մինչև 1 ր. 30 կ. մի ժամը։ Նոմէրները ունեն առողջապահական բոլոր յարմարութիւնները (բժշկ. ցուշեր, մարմարեայ վաննաներ ևայլն)։

Կանանց և տղամարդկանց ընդհանուր լողանալու (общія) սենեակները կարգաւորված են բոլոր յարմարութիւններով։

Զինւորների համար յատկացված կայ մի ընդհանուր սենեակ։ Ջուրը՝ Կուրի ջուրն է, որ յայտնի է իր լաւ յատկութեամբ. մանրազնին կերպով զտվում է ամերիկական մեքենական զտիչ գործիքի միջոցով։ Գոյութիւն ունեցող բոլոր պակասութիւնները վերացված են։ Բաղանիքը նորերս վերանորոգված է և կահաւորված է մաքուր։ Նոմէրների և ընդհանուրի լողանալու տեղի գները առ. ժամը 6 ից մինչև ցերեկվայ ժամը 4 ը բաւականաչափ իջեցված են։

(առ.) (10, 13, 17, 21, 23, 26, 29 օգ. 3, 6, 10 սեպտ.) 10—4

ԲԺՇԿԱՊԵՏ
Բ. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆԻ
ԱՌԱՋԻՆ
Մ. ՀԻՒԱՆԴԱՆՈՑՈՒՄ
(Վօրօնցօվի արձանի հանդէպ)
Կատարվում է ՀԱԿԱԽՕԼԵՐԱՅԻՆ ՊԱՏՈՒԱՍՏՈՒՄՆ 9—2 ժամը։
Վճար իւրաքանչիւր պատուաստման համար 1 ր. 50 կ.։
(առ.) 15—1

ՄԱՆԹԱՇԵԱՆ
ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԴՊՐՈՑ,

հաստատված Թիֆլիսի վաճառականական ընկերութիւնից։ Նախապատրաստական (հանրակրթական) դասարանը ընդունվում են առանց քննութեան այն երեխաները, որոնք կը ներկայացնեն միդասեանից ոչ պակաս դասընթացքի աւարտման վկայական, իսկ առաջինում՝ քաղաքային կամ շինական դպրոցների երկդասեանից ոչ պակաս, կամ թէ որոնք համապատասխան քննութիւն կը բռնեն։

Ընդունելութեան քննութիւնները սեպտ. 1, 2 և 3 ին, առ. ժամը $8^1/_2$ ից։

Խնդրագրերի ընդունելութիւնը և տեղեկութիւններ տալը ամեն օր դպրոցի դիւանատանը, ժամը 9—1-ը։ Ուսման վճարն է 15 րուբլի կիսամեակի համար։

Դպրոցը գտնվում է Թիֆլիսի առևտրական ուսումնարանի շէնութեան մէջ, Պեսկովսկայա փողոցում։

Տեսուչ՝ Վ. Ա. Բարսեղեան
(15,17,19,21,24,26,30,2) առ. 8—3

Լոյս տեսաւ և վաճառվում է բոլոր գրավաճառանոցներում
ԹԻՒՐՔԻ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԻՒՆԸ ●←
և
ԵՐԻՏԱՍԱՐԴ ԹԻՒՐՔ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐԸ
(պատկերազարդ)
Գինն է 20 կ., ճանապարհածախսով 25 կ. Դիմել գրավաճառներին և Վ. Վարդանեանին՝ Тифлисъ, Гановская, № 3, типографія „Эпоха".
ա. (հ. կ.) 5—3

ՄԻ ԻՆՏԵԼԻԳԵՆՏ
ընտանիքում ընդունում են
ՆԱԽԼԵԲՆԻԿՆԵՐ
Լիակատար պանսիօնով և դասերի սերտողութեամբ (րէպէտիրօվկա)։
Դիմել «Մշակի» խմբագրատուն՝ Եսայեանին
(առ.) 5—5

ԿԱԹՈՂԻԿՈՍԱՑՈՒՆ

Հանգուցեալ Մկրտիչ I կաթողիկոսի մահից անմիջապէս յետոյ «Մշակը» առաջարկեց իբրև արժանաւորագոյն թեկնածու ամենայն հայոց հայրապետութեան պաշտօնի համար Մատթէոս արքեպիսկոպոս Իզմիրլեանին։

Եւ առաջարկելով Իզմիրլեանին կաթողիկոսացու ու ընտրելով նրան իր կանդիդատ, «Մշակը» միակողմանիութիւնից խոյս տալու և անաչառութեան սկզբունքը պահպանելու համար իր էջերը լայն բացեց նոյն իսկ իր հակառակորդների առաջ՝ ուրիշ կանդիդատների մասին թեր ու դէմ յօդուածներ գրելու։ Այսպէս օրինակ, «Մշակը» տեղ տուեց յօդուածներ յօգուտ Օրմանեան, Գ. Երիցեան, Մուշեղ եպիսկոպոսների, տպելով, ի հարկէ, և հերքումներ այդ եկեղեցականների կանդիդատութիւնը պաշտպանող և ջատագովող յօդուածների։

Եւ մեր բռնած այդ ուղղութիւնը, մեր կարծիքով, արտադրեց այն արդիւնքը, որ այսօր, երբ կաթողիկոսական ընտրութեան օրերը մօտենում են, հայ ժողովրդի, գէթ Ռուսաստանի հայ ժողովրդի համար, պարզված է այն խնդիրը, թէ ո՛վ է արժանաւորագոյն կաթողիկոսացուն և ո՛ւմ վրա պէտք է կենտրոնացնէ հոկտեմբերի 30-ին Էջմիածնում հայ ժողովուրդը իր քուէները։

Մենք տեսանք, որ հայ ժողովրդի և ինտելիգենցիայի մեծամասնութիւնը, արձագանք տալով մեր ձայնին, ընտրողական ժողովների մեծ մասում Իզմիրլեանին նշանակեց իբրև արժանաւորագոյն կանդիդատ, իսկ փոքրամասնութիւնը առաջարկում էր Օրմանեան պատրիարքին։

Սակայն Օրմանեան սրբազանի թեկնածութեան պաշտպաններն այսօր, Թիւրքիայում տեղի ունեցած վերջին դէպքերից և յեղաշրջութիւնից յետոյ, պէտք է համոզվեն, թէ այլևս անկարելի է առաջ բշել Օրմանեանի կանդիդատութիւնը և նրա անունը պէտք է հանել կաթողիկոսացուների ցանկից։ Եւ պէտք է հանել մանաւանդ այն պատճառով, որ այժմ, ինչպէս որ բոլոր նշանները ցոյց են տալիս, Թիւրքիայից եկող պատգամաւորներից ոչ ոք ի նպաստ Օրմանեանի քուէ չի տայ։

Հետևաբար, մեզ՝ Ռուսաստանի, Պարսկաստանի հայերիս մնում է որոշել, թէ ո՛ր եկեղեցականներից կազմել երկանուն ցանկը, այսինքն Իզմիրլեանի հետ միասին, իբրև երկրորդ ընտրելի, ո՛ւմ ընտրել։

Սակայն, այժմ արտասահմանի և Կ. Պօլսի հայ մամուլի մէջ մի նոր շարժում է առաջ եկել, որ կարող է խափանել Իզմիրլեանի ընտրութիւնը ի պաշտօն ամենայն հայոց կաթողիկոսի։ Այդ շարժումը նպատակ ունի Մատթէոս արքեպիսկոպոս Իզմիրլեանին ընտրել թիւրքահայոց պատրիարք, այն պատճառաբանութեամբ, որ

> Թէև ամենայն հայոց կաթողիկոսական Բարձրագոյն Աթոռը իրեն վիճակուած է ապահովապէս, բայց Պօլսի պատրիարքութեամբ նորին սրբազնութիւնը ազգին աւելի օգտակար ըլլալու միջոցներ պիտի ունենայ թէ ազգային և թէ քաղաքական կրկին տեսակէտներով, մինչդեռ Էջմիածնայ վանքը փակուելով իբրև կաթողիկոս իր գործունէութեան ասպարէզը շատ նեղ պիտի ըլլայ և հայութեան մեծագոյն զանգուածը ուղղակի չը պիտի կրնայ օգտուել իրմէ։

Մենք համաձայն չենք այս կարծիքի հետ։ Ինչպէս առաջ ևս յայտնեցինք, մենք աւելի նպատակայարմար ենք գտնում, որ թիւրքահայոց պատրիարք ընտրվի մի այլ եկեղեցական, օրինակ տեղապահ Եղիշէ եպիսկոպոս Դուրեանը, իսկ Իզմիրլեան ընտրվի ամենայն հայոց կաթողիկոս։

Հայոց եկեղեցին ներկայումս վարչական կազմի կողմից գտնվում է ամենախայտառակ և քայքայուն վիճակի մէջ։ Պէտք է մի հզօր ձեռք, որ կարողանայ վարչական նոր սիստեմ, վերանորոգութիւն մտցնել այդ եկեղեցու կազմակերպութեան մէջ և ազատել նրան վերջնական քայքայումից ու անկումից։ Եթէ Իզմիրլեան այնքան կարող անձն է, որ հայութեան մեծագոյն զանգուածը կարող է նրանից օգտվել, ինչո՞ւ չը պէտք է նրանից օգտվէ հայութեան ամբողջութիւնը։

Երկրորդ, եթէ Իզմիրլեանի կանդիդատութիւնը հանվի, ասպարէզում չը կան նրան համազօր և համակշիռ կանդիդատներ, և հեշտութեամբ կարող է պատահել, որ կաթողիկոս ընտրվի այնպիսի մի եկեղեցական, որ ամենևին ցանկալի չէ։ Միայն Իզմիրլեանը կարող է կենտրոնացնել իր վրա պատգամաւորների մեծամասնութեան քուէները։

Այդ նկատումով, ցանկալի է, որ Թիւրքիայի հայոց ազգային երեսփոխանական ժողովը լրջօրէն կշռէր այս հանգամանքը և չը զրկէր հայոց ընդհանրական եկեղեցին այնպիսի մի ղեկավարից և պետից, որպիսին պէտք է հանդիսանայ Իզմիրլեան արքեպիսկոպոսը։

Հ. Առաքելեան

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Պարիզից «Бирж. Вѣд.» թերթին հեռագրում են.

Ռուսաստանում մետալուրգիական տրեստ հիմնելու մասին տարածված լուրերը հաստատվում են։ Ենթադրվում է, որ տրեստի վարչութիւնը կենտրոնացած կը լինի Բրիւսելում։ Այստեղ համոզված են, որ պաշտօնական Ռուսաստանը համակրանքով է վերաբերվում տրեստին։

—

«Times»-ին հեռագրում են Նիւ-Եօրկից, որ կեանք ապահովագրող «Միտրոպօլիտէն» ընկերութիւնը հէնց այժմ պայմանագիր կնքեց գիտ. հնարող դոկտ. Լիդէ Ֆօրեստի հետ, որը յանձն է առնում երկու տարվան մէջ անթել հեռախօսական յարաբերութիւն հաստատել Նիւ-Եօրկի և Պարիզի միջև։ Հեռախօսի կայարանը շինվելու է «Միտրօպօլիտէն» ընկերութեանը պատկանող աշտարակի վրա, որ 700 ոտնաչափ բարձրութիւն ունի։

—

Լօձի բանտում հրացանի գնդակով սպանված է կալանաւոր Կերբինսկայա, որը խօսելիս է եղել անցորդների հետ։

—

Մեզ հաղորդում են, որ օգոստոսի 19-ին, առաւօտեան ժամը 9-ի մօտերը, Բէլիյ-Կլիւչից Թիֆլիս եկող մի շարք ճանապարհորդների վրա են յարձակվում թուրք աւազակներ և բոլորին թալանում։ Ճանապարհորդների թւումն են լինում կանայք, օրիորդներ և երեխաներ։ Ճանապարհորդներից մէկը՝ Համբ. Եղիեան՝ կամենալով դիմադրութիւն ցոյց տալ, աւազակները վիրաւորում են նրան գլխից։ Առ այժմ ստոյգ մանրամասնութիւններ պակասում են։

ԹԻՒՐՔԻԱՆ ԱԶԱՏԱԳՐՈՒԹԵԱՆ ՇԵՄՔԻՆ

Կ. Պօլսի „Moniteur Oriental" թերթը հաղորդում է, որ մեծ վեզիրը յայտնել է հայոց պատրիարքական տեղապահին, որ Վանի վալիի պաշտօնանկութիւնը վճռվել է մինիստրների խորհրդում, և Միքայէլ էֆէնդի Հէքիմեանը, որ նոյն վիլայէթի նախկին թարգմանն էր, կը նշանակվի վալիի տեղապահ։

Նաւահանգստի պրեֆեկտ դիր-ծովակալ Էշրէֆ փաշան պաշտօնանկ է եղել և նրա տեղ նշանակվել է նաւային կապիտան Մուստաֆա բէյը։

—

Վանի վալի Ալի Րիզա բէյը նշանակվել է Կաստէմունիի վալի։

(«Mon. Orien.»)

—

Սուլթան Աբդիւլ-Համիդի և երիտասարդ-թիւրքերի յարաբերութիւնները նորից վատացել են։ Շարժառիթը համարվում է այն, որ երիտասարդ-թիւրքերը ցանկանում են ոչնչացնել սուլթանի անձնական պահակախումբը — ալբանական գվարդիան, որը, վերջին տեղեկութիւնների համաձայն, բաղկացած է 24,700 ալբանացիներից։

Այս անգամ թիւրիմացութիւնների հեղինակը նոր զինւորական մինիստր Ալի-Րիզա փաշան է, որը այն միտքն է յայտնել, որ թիւրքական զօրքի թիւը 308,000-ից պէտք է իջեցնել 150,000-ի։

Երիտասարդ-թիւրքերը համաձայնութիւն են յայտնել կրճատել նրա թիւը այն պայմանով միայն, որ սուլթանը ինքն էլ կրճատի իր պալատական գվարդիայի թիւը։

Աբդիւլ-Համիդը մերժել է, իսկ զօրքի թիւը կրճատելու խնդիրը հարկաւոր է համարվել յետաձգել մինչև պարլամենտի գումարվելը։

Երիտասարդ-թիւրքերի պարագլուխները շատ դժգոհ են այդ բանից, որովհետև գիտեն, որ պարլամենտը, որի մէջ մտնելու են բոլոր ազգութիւնները, սուլթանի կողմը կը լինի ազգային պաշտպանութեան հարցում։

(„Ран. Ут.")

—

Կ. Պօլիս, 19 օգոստոսի

Արևելեան երկաթուղու Ադրիանօպօլսի արհեստանոցների բանւորների գործադուլը վերջացաւ։ Հացթուխների գործադուլը շարունակվում է։

Բիթլիսից հաղորդում են, որ հայ յեղափոխական ֆէդայիները անձնատուր եղան թիւրք իշխանութեանը և անմիջապէս ազատ արձակվեցին։

(«Հ. Գ.»)

—

Կ. Պօլիս, 19 օգոստոսի

Տեղական երիտասարդ-թիւրքերի կոմիտէտը նկատողութիւն արեց մամուլին բօսնիական հարցին նուիրած յօդուածի համար և ղեկավարվելու համար տուեց հետևեալ պատուէրը. ցոյց տալ սուլթանին պատշաճ յարգանք, անձնական հաշիւներից դրդված յարձակումներ չը գործել նախկին մինիստրների վրա, չը դատապարտել ոչ մի կրօն, աշխատել հաշտեցնել յոյներին հայերի հետ, խուսափել այնպիսի յօդուածներից, որոնք կարող են վիրաւորել այս կամ այն պետութեան, չը գրել չը լուծված՝ օրինակ կրէտական, բօսնիական, Թունիսի և Ալժիրի հարցերի վերաբերմամբ։

(«Հ. Գ.»)

—

Կ. Պօլիս, 19 օգոստոսի

Թիւրքական լրագիրները ողջունելով սուլթանի գահակալութեան 33-րդ տարեդարձը՝ ընդգծում են այն նոր դարագլխի նշանակութիւնը, որ ապահովում է սուլթանի հանգստութիւնը և աներկիւղ դրութիւնը։

Այսօր քաղաքը և Բօսֆօրը ամբողջովին զարդարված են դրօշակներով։ Պատրաստվում է մեծ հրավառութիւն։

(«Հ. Գ.»)

ԼՈՒՐԵՐ ԹԻՒՐՔԱՀԱՅԱՍՏԱՆԻՑ

(Սեփ. թղթակ.)

Իգդիր, 17 օգոստոսի

◆ Բայազէտի շրջակայքի քիւրդերին զինաթափ են արել երիտասարդ-թիւրքերի պահանջի համաձայն։ Սպանվել են 4 հոգի, որոնք դիմադրութիւն են ցոյց տուել զէնքերը յանձնելու ժամանակ։

◆ Ալաշկերտցիք չորս օր է, ինչ անցել են ռուսաց սահմանը և պատմում են, որ չը նայելով օրէ-ցօր անգամ ամենախուլ գիւղերի կեանքի մէջ գործադրվող բարենորոգումներին, այնու ամենայնիւ Թիւրքահայաստանի հայ մասսան երկիւղով և թերահաւատութեամբ է վերաբերվում և վախենում է քիւրդերի վրէժխնդրութիւնից, որովհետև նրանցից խլվում ու վերադարձվում են հայերին անցեալում սրանցից գրաւված կալուածները, բոլոր բանտարկեալները արձակված են Բայազէտում, Ղարաքիլիսէում և միւս տեղերում, իսկ ռուսահայ բանտարկեալները վերադարձել են հայրենիք։

◆ Վանի ամերիկական և գերմանական որբանոցների որբերը, որոնք այդ որբանոցների դասընթացքը վերջացրել էին, գնացել են Եւրոպա և Ամերիկա՝ շարունակելու իրանց ուսումը։

◆ Ռուսական սահմանով ազատ անցուդարձ են անում հայերը։ Թիւրքահայաստանում ընդհանուր տրամադրութիւնը շատ լաւ է։ Ընդհանուր ոգևորութեան ու կեանքի շրջանում միայն քիւրդերն են իրանց քթները կախել։

Ս. Զ.

ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ԳՈՐԾԵՐԸ

—

(Սեփ. թղթ.)

Թաւրիզ, 13 օգոստոսի

Երէկ տմարդիների գնդակի զոհ դարձաւ Շէրիֆ զադէն, որը Թաւրիզի յեղափոխականների մէջ, կարելի է ասել, ամենագիտակից և ամենազարգացած անձնաւորութիւնն էր։ Տերրորիստները հօթը հոգի էին, որոնց մէջ են յայտնի Աբասալիները, որոնցից մէկը անցեալ տարի հայ Թաղերում քիչ մնաց մեծ դժբաղդութիւնների պատճառ դառնար և որին վերջերս ռուսաց հիւպատոսը մի քանի հոգու հետ ձերբակալեց և մի առ ժամանակից յետոյ բաց թողեց։ Այդ մասին ժամանակին գրած եմ։

Սպանութիւն կատարվեց հայոց Լիլավա Թաղում, ֆրանսիական հիւպատոսարանի դիմաց։ Յեղափոխականները սկսեցին հետապնդել, և հէնց այդ հետապնդման ժամին կռիւ սկսվեց մի քանի կէտերում։ Մի քանի ժամ տևող հրացանաձգութիւնը ենթադրել էր տալիս, որ տերրորիստները, կաշառված լինելով կառավարութիւնից, սպանել են Շէրիֆ զադէին և անցել են կառավարականների սահմանը, որից յետոյ դէպքից խրախուսված՝ յարձակումն է տեղի ունեցել։ Կռիւը շարունակվեց մինչև ուշ գիշեր. տերրորիստների ուր լինելը չը բացատրվեց։

Այսօր ժողովրդի թէ հոգևոր և թէ աշխարհական գիտակից դասը մզկիթ և անջուման չեկաւ. այդպիսով կարծէք ուզեցին արտայայտել իրանց խիստ դժգոհութիւնը յեղափոխականների դէմ։

Մինչև կէսօր թէ սպանութեան պատճառը և թէ չարագործների որտեղ լինելը կատարեալ հանելուկ մնացին։ Կէսօրից յետոյ լուր ստացանք, որ չարագործները իրանք կամովին յանձնվել և ապաստանել են Սաթթար-խանի մօտ։

Շէրիֆ զադէներ պարսկական իրականութեան մէջ խիստ հազւագիւտ ծաղիկներ են, որոնք բեղմնաւորվելու համար երկար տարիներ են պէտք, և այդ էր պատճառը, որ պարսիկ գիտակից հասարակութեան հետ ողբում անխտիր թէ տեղիս հայութիւնը և թէ բողոքական միսիօնարութիւնը, որի ուսումնարանում հանգուցեալը թէ ուսուցչի պաշտօն էր վարում և թէ բարձր կուրսերում ուսանում էր։

Թաւրիզ, 14 օգոստոսի

Գիշերս առանց հրացանաձգութեան չանցաւ։ Այսօր դեռ ևս խաղաղ է։ «Անջուման» թերթը վերսկսվեց հրատարակվել։ Այսօր առաջին համարը լոյս տեսաւ։

Շէրիֆ զադէի տերրորիստներից երեք հոգու, որոնք պահվում էին գիշերս զինանոցում, այս րոպէին հայոց Թաղերով, խիստ պահակի հսկողութեամբ, տարան անջուման քննութեան ենթարկելու։ Շէրիֆ-զադէի անմեղ արիւնը կարող է թանգ նստել սահմանադրականների վրա։

Կառավարչապետը ոչ մի վճռական քայլ չէ դիմում։ Դեռ այսօր լուր է պտտում, որ քաղաքի շրջակայքից աւելի հեռացել է և գտնվում է Վասմինջ գիւղում։ Լսում ենք, որ նորանոր ուժեր աւելանում են։ Անցեալ օր քարգուզարը (արտաքին գործերի մինիստրութեան գործակալը), որը ներկայումս գտնվում է հայոց Թաղում, կառավարչապետին այցելութեան գնալիս՝ սահմանադրականները քաղաքի շրջակայքից յետ տուին։

Շարունակ փողոցներով զինված Թափօրներ էին անցնում՝ պարագլուխ ունենալով մեծ թւով զինված հոգևորականներ և սէիդներ։ Շէրիֆ զադէի սպանութիւնը բաւական նսեմացրել է Թափօրների շուքը և պակասեցրել թէ քանակը և թէ որակը։ Շէրիֆ-զադէն վերջին ժամանակներս ապաստանել էր ֆրանսիական հիւպատոսարանում և շատերը խորհուրդ էին տալիս նրան հեռանալ Պարսկաստանից, բայց նա միշտ պատասխանելիս է եղել, թէ իր ներկայութիւնն անհրաժեշտ է այստեղ, թէև իմանում է, որ իր կեանքին վտանգ է սպառնում։

Իբօ

ԱԶԳԵՐԻ ԵՂԲԱՅՐՈՒԹԻ՞ՒՆ ԹԷ՞ ԴԱՐՁԵԱԼ ՓՈԽԱԴԱՐՁ ԱՏԵԼՈՒԹԻՒՆ

—

Յիրաւի որ տարօրինակ, չափազանց տարօրինակ տպաւորութիւն են թողնում Կ. Պօլսում հրատարակվող հայ թերթերը։ Նրանք ոչ միայն չը գիտեն չափաւորել իրանց զգացումները, և «կեցցէ»ների աղաղակներ են արձակում դեռ երէկվայ «մարդասպան» սուլթանի հասցէին ինչպէս մի քանի օր առաջ «Մշակում» նկատել էր պ. Շահրիարը, այլ և միանգամայն զուրկ են երևում պատմական ներկայ րոպէն գիտակցելուց ու հասկանալուց։

Կ. Պօլսի հայ թերթերը, այսպիսի ժամանակներում, երբ կատարված յեղաշրջումի շնորհով մի կատարեալ նոր դարաշրջան է սկսվում այդ տանջված երկրի տանջված բոլոր ժողովուրդների համար, երբ շարժումները ղեկավարող Թիւրք տարրը ամեն կերպ և ամեն միջոցներով աշխատում է ամուր ու հաստատ հիմքերի վրա դնել Թիւրքիայում բնակվող բազմազան ազգերի ու ցեղերի եղբայրութեան և համերաշխութեան գաղափարն ու սկզբունքները, այդպիսի մի նշանակալից ժամանակ, ասում ենք, Կ. Պօլսի հայ թերթերը, մամուլի ազատութիւն ստանալուն պէս, իսկոյն սկսեցին Րաֆֆու աշխատութիւններով լցնել իրանց բանասիրական բաժինները։

Ո՞վ չը գիտէ, որ Րաֆֆու համարեա թէ բոլոր աշխատութիւնները համակված են ազգային անկախութեան և «ազատ Հայաստան» ձեռք բերելու տենդէնցներով, հետևապէս միանգամայն հակառակ զգացումներ են ներշնչում ընթերցողներին, քան այն, ինչին այսօր ձգտում են երիտասարդ-Թիւրքերը և սրանց ջանքերով ստեղծված այսօրվայ ամբողջ ողջամիտ սահմանադրական Թիւրքիան։ Շատ պարզ ու հասկանալի պիտի լինի ուրեմն, որ այսուհետև էլ հայ սերունդներին «Խենթի» և «Ջալալէդդինի» նման գրուածքներով կերակրելը ոչ միայն չէ կարող ազգերի եղբայրութեանն ու համերաշխութեանը նպաստել, այլ ճիշտ դրա հակառակը. հայ մասսաները նորից կը շարունակեն ատելութեամբ վերաբերվել իրանց շրջապատող այլացեղ տարրերին ու դեռ էլի կը շարունակեն ցնորքներ երազել, իսկ Թիւրք տարրերն էլ, հայերի այդ երազներից զգուշված, կը շարունակեն անվստահութեամբ վերաբերվել նրանց։ Եւ պարզ է, թէ ինչ կը լինի դրա հետևանքը. նոյն փոխադարձ ատելութիւնը, ինչ որ եղել է այս վերջին 30 տարվայ ընթացքում։

Ի հարկէ, շատ հասկանալի է, որ Րաֆֆու աշխատութիւնները, մինչև օրս իբրև շատ խիստ կերպով արգելված պտուղ, մեծ ագահութեամբ կը կլանվեն Թիւրքահայերի կողմից։

Բայց այդ դեռ իրաւունք չէ տալիս ազգային ու ժողովրդական շահերի պաշտպան հանդիսացողի և հասարակական կարծիքը ղեկավարողի յաւակնութիւն ունեցող պ. պ. խմբագիրներին ու գրականագէտներին, որ նրանք, իրանց թերթերը աջողութեամբ սպառելու և շատ դրամ շահելու նպատակով, ընդառաջ գնան անգիտակ մասսաների պահանջին ու այդպիսի գրուածքներով կերակրեն նրանց։ Դա ոչ միայն անմտութիւն կամ անտակտութիւն է, այլ և դաւաճանութիւն այն մեծ գործին, որը վերջապէս գլուխ է բերվել երկար ու տանջալից տարիների աշխատանքներով և որին հաստատուն ու ամուր հիմքերի վրա դնելու համար դեռևս շատ երկար տարիների խոհուն ու մեծ աչալրջութիւն պահանջող աշխատանք է հարկաւոր։

Ինչքան սահմանադրական երիտասարդ-Թիւրքերը ամեն կերպ աշխատում են իրանց ազգակիցներին մոռացնել տալ այս վերջին 30 տարիների ընթացքում հայերի հետ ունեցած յարաբերութիւնները, իսկ մեր հայ խմբագիրները ընդհակառակն իրանց բանասիրական գրուածքներով ճիշտ հէնց այդ անցեալն են աշխատում յիշեցնել հայերին։

Այդ կարգի գրուածքներով չէ կարելի երբեք ազգերի եղբայրութեան սկզբունքը հաստատ և իրական հողի վրա դնել։ Դրա համար անհրաժեշտ է ոչ միայն այդ կարգի գրուածքները չարտատպել ու չը տարածել ժողովրդի մէջ, այլ, եթէ միայն հնարաւոր է, բոլորովին վերցնել շրջանառութիւնից, պահպանելով նրանց իբրև տխուր անցեալի պատմական դօկումենտներ։

Այդ են պահանջում հայ ժողովրդի, Թիւրքիայում ապրող ազգերի եղբայրութեան և վերածնված սահմանադրական Թիւրքիայի շահերը։

Խ. Ազատ

ԿԱՐԵՒՈՐ ՅԱՅՏՆՈՒԹԻՒՆՆԵՐ

—

Պ. Միլիւկովը «Рѣчь» լրագրի մէջ շարունակում է իր ճանապարհորդական նամակները երիտասարդ-Թիւրքերի սկսած շարժման ու նրանց ղեկավար «Միութեան և առաջադիմութեան լիգայի» մասին։

Տարած յաղթութիւնից յետոյ, յիշեալ լիգայի տակտիկայի մէջ, նրա ասելով, զգալի փոփոխութիւն է կատարվել։

— Մինչև այժմ մենք յեղափոխականներ էինք, իսկ այժմ դարձել ենք պահպանողականներ։

Ահա թէ ինչ ձևակերպութեամբ է բնորոշել այդ փոփոխութիւնը կօմիտէի անդամներից մէկը Միլիւկովի հետ խօսելիս։

Այդ փոփոխութիւնից էլ օգուտ է քաղում Միլիւկովը յիշեալ ղեկավարող կուսակցութեան դէմքը պարզելու համար։ Նրա տուած տեղեկութիւններից մենք կը տանք միայն ուշագրաւները։

Չը նայելով որ «Միութեան և առաջադիմութեան լիգան», որ միւս արմատական կուսակցութիւնների հետ միասին ընդունել էր յեղափոխական տակտիկայով գործելու վճիռը, պատրաստվում էր նոյնիսկ Պօլսի վրա գնալու և քաղաքացիական կռիւ մղելու, նա այնուամենայնիւ տարբերվում էր միւսներից իր չափաւոր ծրագրով։

Դա դեռ ևս յաղթութիւնից առաջ էր։

Յաղթութիւնից յետոյ նրանք արդէն նոյնպիսի թշնամութեամբ են վերաբերվում դէպի միւս հոսանքները, ինչպէս որ հոկտեմբերեանները և «միապետականները» դէպի կադետական «ատօնօմիան»։ Նրանց մեղադրում են Թիւրքական կայսրութիւնը անդամահատելու ձգտման մէջ և վճռականապէս ասում են, որ այդ հոսանքը Թիւրքիայի ներսում ոչ մի ազդեցութիւն չէ ունեցել։

1902 թւի պարիզեան կօնգրէսը արդէն առիթ տուեց Ահմեդ Րիզային բողոքելու Թիւրքական արմատականների դէմ, որոնք կոչ են անում եւրոպական միջամտութեան։ Ինչ վերաբերում է 1907 թւի դեկտեմբերեան (27—29) կօնգրէսին, նա թէև ընդունեց բոլորին միացնող որոշում (սուլթանին գահընկէց անել, տապալել հին ռէժիմը և հաստատել ժողովրդական ներկայացուցչութիւն), այդ կօնգրէսը թէև ընդունեց յեղափոխական տակտիկան (զինված ընդդիմութիւն կառավարութեան գործողութիւններին, պասսիվ ընդդիմութիւն՝ գործադուլներ, հարկեր չը վճարել, զօրքի մէջ պրօպագանդ մղել, ընդհանուր ապստամբութիւն և այլն), բայց այժմ, «Միութեան և առաջադիմութեան լիգայի» տարած յաղթանակից յետոյ, նրանք խօսում են ցաւակցութեամբ և աշխատում են մեղմացնել այդ որոշումները պատճառաբանելով նրան կօնգրէսի բազմատեսակ ու պատահական կազմով։

«Կօնգրէսում,—ասում են նրանք,—մասնակցում էին 13 կուսակցութիւններ. մեր խմբակը երկրորդական տեղ էր բռնում։ Ուրիշները պարծենում էին, որ նրանց ետևում կան ահագին կազմակերպված ուժեր, և խոստանում էին մեզ օգնել։ Բայց հէնց որ եկաւ գործելու ժամանակը, պարզվեց, որ, բացի մեզանից, միւս կուսակցութիւնները կազմակերպված չեն և անզօր են։ Կօնգրէսի համաձայնութիւնը ուղիղ էր միայն բոլորիս կողմից ընդունելի նպատակի—հին ռեժիմը տապալելու—համար։ Սուլթանին գահընկէց անելը անհրաժեշտ կը լինէր, եթէ որ նա չը զիջէր։ Գուցէ այն ժամանակ միայն հարկ լինէր միւս խմբակների հանդէս գալուն ու մասնակցելուն։ Դա սակայն չեղաւ, և մենք բաղդաւոր ենք համարում մեզ յիշատակելու, որ աջողութիւնը ձեռք բերինք մենք մենակ, առանց կողմնակի օգնութեան. և հետևապէս ոչ ոքի ոչինչ պարտական չենք»։

Ի միջի այլոց Միլիւկովի տուած տեղեկութիւններից երևում է, որ թէ արմատականները և թէ լիբէրալները առհասարակ դէմ են համիսլամականութեան, որը համարում են Համիդի անձնական քաղաքականութիւնը և որով նա գերմանական կայսրի գրգռմամբ ուզում է հասարակական ուժերի ուշադրութիւնը հեռացնել երկրի ներքին բարենորոգումներից։

«Հաւատացէք մեզ, համիսլամականութիւնը մեր ամենաոխերիմ թշնամին է,—ասում էին ինձ կօմիտէի անդամները,—դա մեր սև հարիւրեակն է»։

Այնուհետև նրանք չափազանց բացասաբար են վերաբերվում դէպի եւրոպական միջամտութիւնը։

Այդ վերաբերմունքը յաղթող խմբի, համարեա, գլխաւոր գիծն է կազմում։

Կօմիտէի անդամները պարզ կերպով խոստովանում են, որ յեղաշրջումը շտապեցվեց մակեդոնական բարենորոգումների համար սկսված դիպլօմատիական բանակցութիւնների շնորհիւ։ Բանակցութիւնների վերջին շրջանում երիտասարդ-Թիւրք ազատամիտները տեսնում էին լուրջ և արագօրէն աճող սպառնալիք ոչ միայն Թիւրքիայի ամբողջութեան, այլ և նրա գոյութեան համար։

Այդպիսով Թիւրք հայրենասէրները ճիշտ էին գնահատել սուլթանի քաղաքականութեան վնասակար հետևանքները երկրի համար, այդ պատճառով էլ ամբողջ յեղաշրջումը ազգային ցոյցի բնաւորութիւն ունէր յօգուտ կայսրութեան ամբողջութեան և ընդդէմ եւրոպական միջամտութեան՝ պետութեան այս կամ այն մասի կամ առանձին ազգութիւնների օգտին։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԽՈԼԵՐԱ

—

◆ Թիֆլիսում խոլերա երևալուց մինչև այսօր բակտերիօլօգիական քննութեամբ ապացուցված ասիական խոլերային դէպքերի թիւը եղել է 14, որոնցից 12 ը վերջացել են մահվամբ։

◆ Երէկ, օգոստոսի 19-ին, կայացել է քաղաքային վարչութեան նիստը հակախօլերային պատուաստումների ղեկավար Մուխարինսկու, բժիշկներ՝ Իգիթխանցի և Խաչաղեանցի մասնակցութեամբ, պատուաստումների համար նոր կայաններ բանալու հարցի մասին խորհրդակցելու։ Մեծամասնութիւնը յարմար է գտել բանալ նոր կայաններ երկաթուղային շրջանում Ենֆիաճեանցի ծխախոտի գործարանին մօտիկ։

◆ Հակախօլերային պատուաստումների գործը հետզհետէ տարածվում է նաև ազգաբնակութեան ստորին խաւերում. գալիս են պատուաստվելու բանւորներ, Թուրքեր իրանց կանանց ու երեխաների հետ միասին։ Անհրաժեշտ է, որ հասարակական լայն շրջանները կարողանան օգուտ քաղել գիտութեան հնարած այդ փրկարար միջոցից։

ՊԵՏԱԿԱՆ ԴՈՒՄԱՅԻ ՇՈՒՐՋԸ

—

Օգոստոսի 20-ին, „Бирж. Вѣд." լրագրի ասելով, տեղի կունենայ Պետական Դումայի պրեզիդիումի նիստը Դումայի դիւանատան մէջ ծառայութեան մտնելու համար տրված խնդիրները քննելու և բացված պաշտօնների համար թեկնածուներ ընտրելու նպատակով։

Միևնոյն թերթին հիմնաւոր աղբիւրներից հաղորդում են, որ Դումայի առաջիկայ սեսսիայի սկիզբներին պետական պաշտպանութեան մասնաժողովի կազմի մէջ մեծ փոփոխութիւն կը կատարվի։

Ինչպէս յայտնի է, սեսսիայի սկզբում ընդունվելու է այն նախագծը, որտեղ մտել է Միլիւկովի խմբագրած կէտը, թէ Դումայի բոլոր մասնաժողովները պէտք է ընտրվեն յարաբերական ներկայացուցչութեան հիման վրա։

Դրանից հոկտեմբերեանները ուզում են օգուտ քաղել պաշտպանութեան մասնաժողովի մէջ մտցնելու օպպօզիցիայի ներկայացուցիչներին։

Սակայն նախ քան այդ՝ պէտք է համաձայնութիւն կայանայ թեկնածուների մասին։

Ըստ երևոյթին ժողովրդական ազատութեան կուսակցութեան կողմից կընտրվեն Ա. Ն. Կօլիւբակին և գեն. Բօբեանսկի։ Խաղաղ վերանորոգչականների խմբակից՝ Բօգանով։

Հոկտեմբերեանները բողոք կը յայտնեն միայն սօցիալ դեմօկրատների կուսակցութեան ներկայացուցիչներին մասնաժողովի մէջ ընդունելու դէմ։

ՊՐՕՖ. ԻՇԽ. Ի. Ռ. ԹԱՐԽԱՆՕՎ

—

Կարճ ժամանակամիջոցում վրաց հասարակութիւնը երկու զգալի կորուստ ունեցաւ. դեռ նոր էին գերեզման իջեցրել պրոֆ. Վ. Մ. Պետրիաշվիլուն, այժմ նրան յաջորդում է մի ուրիշ կորուստ՝ ֆիզիօլօգիայի պրոֆ. իշխ. Ի. Ռ. Թարխանովի, որի մահը, ինչպէս հաղորդել էինք թերթիս նախորդ համարում, տեղի ունեցաւ օգոստոսի 11-ին Աւստրիայի Կրժեշովից քաղաքում։

Հանգուցեալը վրաց իշխանական հին տոհմի սերունդ էր. նա ծնվել էր Գօրու գաւառի Ախալքալաք գիւղում 1846 թւին։ Մանուկ հասակում նա, ստանալով ընտանեկան լաւ կրթութիւն, հօր ազդեցութեան տակ, պատրաստվում էր զինուորական ծառայութեան նուիրվելու։ Սակայն այդ միջոցներում Կովկաս այցելող հռչակաւոր գրող Դիւման (հայրը) մեծ ներգործութիւն է ունենում նրա վրա, և նա վճռում է նուիրել իրան գրական գործունէութեան։

Հօր համաձայնութիւնը ստանալով նա գնում է Պետերբուրգ ուսումը շարունակելու և, 1863 թւին գիմնազիական քննութիւն բռնելով, մտնում է Պետերբուրգի համալսարանը, ապա և բժշկա վիրաբուժական ճեմարանը, ուր, 1869 թւին աւարտելով ուսումը, մնում է դասատու։ 1870 թւին նա այնտեղ դօկտօրութեան քննութիւն է բռնում և պաշտպանում է իր դիսերտացիան ֆիզիօլօգիայից։

1872 թւին նրան ուղարկում են արտասահման կատարելագործելու իր մասնագիտութիւնը. այդ նպատակով Իվ. Ռօմանօվիչը այցելել է Եւրոպայի գլխաւոր ֆիզիօլօգիական լաբորատորիաները և իր կատարած մի շարք աշխատութիւններով հարստացրել է թէ ռուսական և թէ արտասահմանեան մասնագիտական գրականութիւնը։ 1875 թւին հանգուցեալը հաստատվել է պրիվատ-դօցենտ բժշկա վիրաբուժական ճեմարանի և 1877 թւին օրդինարնի պրոֆեսսոր։ Ամբողջ .0 տարի մինչև 1895 թւականը, նրա գործունէութիւնը շաղկապված է եղել զինւորական-բժշկական ճեմարանի հետ, իսկ 1895 թւականից հեռանալով՝ բաց է արել սեփական կաբինետ, նուիրելով իրան կենդանիների և մարդկանց օրգանիզմների հետազօտութեան։

Հանգուցեալը իր աշխատութիւններով ֆիզիօլօգիայի մէջ աչքի ընկնող տեղ է գրաւել։ Նա այդ ճիւղի գիտելիքները աշխատել է հանրամատչելի լեզուով ընդհանրացնել ժողովրդի մէջ ինչպէս դասախօսութիւններով, նոյնպէս և առանձին հրատարակութիւններով և յօդուածներով։ Վերջին ժամանակները նա խմբագրում էր գիտական-բժշկական մի քանի հրատարակութիւններ. «Домашній докторъ», «Литературно-медицинскій журналъ» և այլն։ Ի միջի այլոց նա անդամ էր և զանազան գիտական ու հասարակական հաստատութիւնների և կազմակերպութիւնների։

Իվան Ռօմանօվիչը վախճանվեց 62 տարեկան հասակում, երբ կարող էր դեռ ևս օգտակար լինել իր սիրած ասպարիզում։

ՅՕԳՈՒՏ ԹՈՒՐՔԱՀԱՅ ՍՈՎԵԱԼՆԵՐԻ

—

Ստացանք Եգիպտոսի Աղէքսանդրիա քաղաքի հայ աւետարանական եկեղեցու քարոզիչ Բ. Ս. Ճէճիզեանից 60 ր. 20 կ. (620,50 եգիպտ. ղրուշ), որ նուիրել են հետևեալ անձինք. Յ. Մուղալեան 100 ղրուշ, Կ. Մուղալեան 97,50 ղր., Յ. Զօրլեան 80 ղր., Յ. Հաննէսեան 50 ղր., Ա. Զ. Աստլեան 40 ղր., Բ. Ս. Ճէճիզեան 30 ղր., Մ. Թէլեան, Ա. Հաննէսեան, Հ. Մուղալեան և Գ. Պետրոսեան 20-ական ղր., Գ. Փիրէճեան 15 ղր.; օր. Ա. Ալեանաքեան, Գ. Գաբամաճեան, Ս. Գուլաեան, Ս. Թապաքեան, տիկ. Բ. Ճէճիզեան, օր. Ոստան, Կ. Զօրլեան, Պ. Պապիկեան, Պ. Սարաֆեան, Թ. Վարպետեան և ոմն 10-ական ղր., օր. Մ. Նահարեան 8 ղր., Մ. Ա. և Բ. Ուժէնեան 5 ական ղրուշ։

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԳԱՒԱՌԻՑ

(Սեփ. թղթ.)

Գանձակ, 19 օգոստոսի

Ամսիս, 13-ին, Թօքախտի ճիրաններում երկու ամիս տանջվելուց յետոյ, 25 տարեկան հասակում վախճանվեց քաղ. դպրոցի հայոց լեզուի ուսուցիչ Մ. Ենգիբարեանը։ Հանգուցեալը քաղաքումս յայտնի էր որպէս բարեխիղճ ուսուցիչ և վայելում էր իր աշակերտների և ընկեր-ուսուցիչների յարգանքը։

Ենգիբարեանի մահով՝ հարց է ծագում, թէ արդեօք քաղ. ուսումնարանի աշակերտներին աջողվելո՞ւ է ունենալ նոյնանման մի ուսուցիչ, թէ նորից հայոց լեզուի դասերը տրվելու են այնպիսի մարդկանց, որոնք միանգամայն անհամապատասխան կը լինեն իրանց ստանձնելիք պաշտօնին։

Սարգօ

—

Նիժ, 14 օգոստոսի

Ամսիս 10-ին տեղիս չորս եկեղեցիների ժողովուրդը հաւաքվեց գիւղիս ս. Եղիշէ եկեղեցու բակը, ուր և կատարվեց հոգաբարձական ընտրութիւն։ Ընտրվեցին հետևեալ անձինք. Ա. Թադէոսեան, Մ. Վէզիրեան, Վ. ք. Ծօտանեան, Մ. Քարամեան, Ա. Վարդանեան, Ա. Թափտուղեան, Զ. Գեօզագարեան և Ա. Փաշանեան։

Ընտրութիւնը կարելի է աջող համարել, եթէ, մանաւանդ, ի նկատի ունենանք անցեալ հոգաբարձութեան անհոգ ու ոչ գովելի գործունէութիւնը։

Ազ-ունկ

—

Շուշի, 18 օգոստոսի

Խուզարկութիւններն ու ձերբակալումները շարունակվում են դեռ... Անցեալ շաբաթ կալանաւորեցին երկու օրիորդի, որոնց, սակայն, հարցաքննութիւնից յետոյ իսկոյն ազատ արձակեցին։ Իսկ ամսիս 16-ին երեկոյեան ձերբակալվեց Մոսկվայի առևտրական ինստիտուտի մի ուսանող։ Քաղ. ինքնավարութիւնն էլ վերջապէս սկսել է գլխաւոր փողոցները նորոգել տալ։

Նվերստ

ԴԱՏԱՍՏԱՆԱԿԱՆ ԴԱՀԼԻՃԻՑ

—

(Սեփակ. թղթակց.)

Նոր-Բայազէտ, 15 օգոստոսի

Երևանի նահանգական դատարանի սեսսիան Դարաչիչագ ամառանոցից այստեղ գալով ամսիս 10 ին բաց է արել իր նիստերը գաւառի գործերը քննելու համար։

Օգոստոսի 14 ին քննվում էր Բասար-Գեչարի հասարակութեան գլխաւոր տանուտէր Արամ Մելիքխանցի սպանութեան գործը, որով մեղադրվում էին այդ գիւղի երկու յայտնի ընտանիքների անդամներ, այն է՝ Յովհաննէս և Օհանջան Արզօյեանցները և Յարութիւն ու Յակոբ Սահակեանները։

Գործը իր տեսակում շատ բարդ և հետաքրքրական է, մանաւանդ որ աչքի ընկնող պաշտպաններ էին եկել—պ. պ. Ի. Մելիք-Ազարեան, Յ. Ղօրղանեան, Լ. Մուշեղեան և Ա. Հասան Ջալալեան։ Դահլիճում ասեղ գցելու տեղ չը կար. հարիւրաւոր մարդիկ բրար հրելով ներս էին թափվում լսելու, սակայն դռնապանները արգելում էին ներս մտնել։ Դատարանի նախասենեակը, բակը, դռները ու լուսամուտների մօտ, պատերի տակ խռնված էր ահագին ամբոխ, որը սրտատրոփ սպասում էր գործի վախճանին։

Առաւօտեան ժամը 10 ին սկսվեց գործի քննութիւնը. կանչված էին մօտ 50 վկաներ։ Նիստին նախագահում էր նահանգական դատարանի անդամ Մայզօր, անդամներն էին՝ Նադիրաձէ և Աղաբաբ-բէկօվ։ Մեղադրում էր դատախազի օգնական Նեկիլեր։

Գործը կայանում է հետևեալ հանգամանքներում. անցեալ տարի այս միջոցին մեղադրեալներից Յարութիւն Սահակեանը օրը ցերեկով սպանել էր Բասար-Գեչար գիւղում հասարակութեան տանուտէր Արամ Մելիքխանցին՝ մաուզէր ատրճանակից 3 գնդակ արձակելով։ Հանգուցեալը իբրև երիտասարդ գործող՝ նուիրված էր ընդհանուր հասարակութեան օգտին ծառայելու։ Նա, իբրև անաչառ պաշտօնեայ, մեծ յարգանք էր վայելում շրջապատող հայ և Թուրք գիւղացիութեան մէջ. ուստի արդէն երկու եռամեակ է, ինչ հանգուցեալը ընտրվում էր 15 գիւղի համար բոլոր հասարակութեան տանուտէր՝ էլ աւելի նախանձ շարժելով իր հակառակորդները շրջանում, որոնք չը նայելով որ շատ են աշխատել հանգուցեալի ընտրութիւնը կասեցնել, բայց չէ աջողվել։ Վերջապէս Մելիքխանցի հակառակորդները, որոնց պարագլուխն է մեղադրեալ Յովհաննէս Արզօյեանց, աւելի «լայն գործունէութեան» ասպարէզ ունենալու համար, շատ ցանկացել են մի որևէ Թուրք տանուտէր ընտրել, քան թէ Մելիքխանցին, որը, երևի խոչընդոտ լինելով հանդերձ նրանց շահերին, գլուխ չէր խոնարհեցնում նրանց առաջ և չէր տարվում «գիւղի ջոջերի» քմահաճոյքներից, ինչպէս այդ լինում է շատ գիւղերում... Եւ ահա չար նախանձն էլ աւելի խոր արմատներ է ձգում հակառակորդների սրտում, և, շատ չէ անցնում, Արամ Մելիքխանցը ընկնում է նրանց գնդակներից...

Մանրամասն հարցաքննութիւնից յետոյ՝

դատարանը, 26 ժամից յետոյ (օգոստոսի 15-ին ժամը 12 ին), արձակեց իր վճիռը, որոշելով ենթարկել Յովհաննէս Արզոյեանցին տաժանակիր աշխատանքների 12 տարով (իբր սպանութեան դրդողի), Յարութիւն Սահակեանին և Օհանջան Արզոյեանցին՝ 10 տարով, իսկ Յակոբ Սահակեանին արդարացրեց։

Վերջինի արդարացման դէմ դատախազը բողոքեց, իսկ միւս դատապարտեալների կողմից վճռաբեկ բողոք տուեցին պալատին նրանց պաշտպանները։

Աւելացնենք և այն, որ հանգուցեալ Մելիքեանցի մայրը և այրին պահանջ էին յարուցանել իրանց ապրուստի վերաբերմամբ և գործը յանձնել պ. Լ. Մուշեղեանցին։ Դատարանը վճռեց այրուն—հանգուցեալի կնոջը—տարեկան ապրուստ տալ մեղադրեալների կողմից 200 ր. մինչև նրա մարդու գնալը, իսկ մօրը համար ոչինչ չորոշվեց։

Դատարանի վճիռը ըստ երևոյթին հաճութեամբ ընդունվեց ժողովրդի կողմից։

Որսորդ

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

◆ Թիֆլիսում տեղեկութիւն է ստացվել, որ կոմս Վօրօնցօվ-Դաշկօվը Կովկաս կը վերադառնայ մի ամսից յետոյ, այսինքն Պետական Դումայի գործունէութիւնը վերսկսվելու սկիզբներում։

◆ Երեքշաբթի, ամսիս 19 ին, սուլթան Աբդուլ-Համիդի ծննդեան տարեդարձի օրը, Թիֆլիսի թիւրքական հիւպատոսարանում ընդունելութիւն կար։ Ի միջի այլոց շնորհաւորելու էին գնացել 70 թէ թիւրքիացի և թէ տեղացի հայեր, դրանց թւում և Մողնու ս. Գէորգ եկեղեցու աւագ քահ. տէր Մ. Ջմշկեան, որը մի ոտանաւոր-ճառով շնորհաւորել էր Թիւրքիայի սահմանադրութիւնը և սրա յարատևութեանը բարեմաղթութիւն կատարել։ Հիւպատոսը շատ գոհ է մնացել, խոստանալով եղած բարեմաղթութիւնների մասին հեռագրել Կ. Պօլիս, և հիւրերին հիւրասիրել է շերբէթով։ Հիւպատոսարանը այդ ամբողջ օրը զարդարված էր դրօշակներով։

◆ Օգոստոսի 25-ին Թիֆլիսի դատաստանական պալատում, դասային ներկայացուցիչների մասնակցութեամբ, քննվելու է նախկին «Կեանք» թերթի խմբագիր Բախիշ Իշխանեանի գործը։ Նա մեղադրվում է նրանում, որ յիշեալ լրագրի առաջնորդող յօդուածում կոչ է անում ապստամբական գործողութեամբ տապալելու գոյութիւն ունեցող պետական կարգը։ Մեղադրեալին պաշտպանելու են երդուեալ-հաւատարմատարներ Կլանկ և Քանանեան։

◆ Վերջին ժամանակներս տեղական լրագիրների մէջ լոյս տեսաւ մի լուր, որ իբր «Դվորցօվայա հիւրանոցի» շինութիւնը ծախվում է բանկի համար։ Այդ մասին յիշեալ համարների տէր տ. Զ. Ս. Սաղաթելեանը խնդրում է մեզ հաղորդել ի գիտութիւն հասարակութեան, որ յիշեալ լուրը հիմնովին սխալ է և հիւրանոցը այսուհետև էլ մնում է նոյն տեղում։

◆ Առաջիկայ սեպտեմբերի 1-ից ժողովրդական լուսաւորութեան մինիստրութեան կողմից բաց թողնված գումարներով, 1872 թւի կանոնադրութեան հիման վրա, բացվելու են քաղաքային չորսդասեան դպրոց Թիֆլիս քաղաքում՝ 4-րդ աւճալեան, Բաքուի նահանգի Ղուբա քաղաքում և Սև-ծովեան նահանգի Տուապսէ աւանում։ Նոյն ժամանակներում Երևանի նահանգի Օրդուբաթ քաղաքի երկդասեան քաղաքային դպրոցն էլ վերածվելու է չորսդասեանի։

◆ Թիֆլիսի նահանգապետը հաստատել է հացի հետևեալ սակագինը. փուռերում թխած հացի առաջին տեսակի ֆունտն արժէ $4^{3}/_{4}$ կ., երկրորդը՝ $4^{1}/_{2}$ կոպէկ։ Թոնիրների հացը. առաջին տեսակը՝ $5^{1}/_{4}$ կոպ., երկրորդը՝ 5 կոպէկով։

◆ Ժամանակաւոր գեներալ-նահանգապետների կողմից զանազան ժամանակներում Թիֆլիսում հրատարակած պարտադիր որոշումների գործադրութեանը վերահսկելու նպատակով նշանակված են 11 օֆիցէրներ ոստիկանատների թւի համաձայն։

◆ Թիֆլիսի 10-րդ ոստիկանամասի պրիստաւ Գ. Վ. Լէվաշեվը նշանակվում է Բօրջալուի գաւառապետ, իսկ 7-րդ մասի նախկին պրիստաւ Գրեբինեանը՝ Ախալքալաք քաղաքի պրիստաւ։

◆ Քաղաքային վարչութեան կարգադրութեամբ, քաղաքի բոլոր մասերում սիւների և ցանկապատների վրա կպցնելու են քաղաքամասերի բժիշկների հասցէները, որոնց օգնութեանը պէտք է դիմեն կասկածելի հիւանդութեան դէպքերում։

◆ Ինչպէս տեղեկանում ենք, Գարեգին Լևոնեանին թոյլատրված է ռուսերէն լեզուով հրատարակել Թիֆլիսում «Жало» անունով երգիծաբանական երկշաբաթաթերթ. «Жало»-ն մտադրութիւն կայ լոյս ընծայել առաջիկայ օգոստոսի 25-ից։

◆ Մեշչանների լիազօրների վերջին խորհրդակցութեան ժամանակ վերջնականապէս որոշված է մեշչանների աւագի պաշտօնի համար դնել Աֆրիկեանի (միաձայն) և Առաքելեանցի (26-ից 8 ձայնով) թեկնածութիւնները։

◆ Ալեքսանդրեան ուսուցչական ինստիտուտում սկսվել են ընդունելութեան քննութիւնները։ 130 խնդրատուներից, բժշկական քննութիւնից յետոյ, քննութիւն տալու թոյլատրվել են 96 հոգի, որոնցից 63 ը գիւղական ուսուցիչներ են։ Ազատ կայ միայն 30 տեղ։

◆ Վրաց թատրոնի շինութեան գործը վերջին ժամանակներս առաջ է գնում արագութեամբ. կարծում են, որ դեկտեմբերի 1 ից հնարաւորութիւն կունենան թատրոնի շէնքը պատրաստ յանձնել դերասանուհի Եւօրսկայային։

◆ Օգոստոսի 19 ին Դանձակ և Ալաբաշլի կայարանների միջև գիշերվայ ժամը 2 և 10 րօպէին խորտակվել է ապրանքատար № 229 գնացքը, որի ժամանակ վիրաւորվել են մեքենավար Լապշին, օբերկոնդուկտոր Բեզզաբօվ և կոնդուկտոր Իսայէվ։ Խորտակումը առաջ է եկել նրանից, որ անյայտ չարագործներ ռելսները բաց արած էին եղել։

ՈՍՏԻԿԱՆԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

◆ Օգոստոսի 19 ին, առաւօտեան ժամը 10 ին, 3 անյայտ չարագործներ գողացել են ս. Սարգսի փողոցի վրա № 54 տան մէջ ապրող վարժուհի Ալեքսանդրա Չիկօվանիի բնակարանից ոսկէ ու արծաթէ իրեր 500 րուբլու արժողութեամբ։ Կասկածվում են Միխայիլ Դոլմազով և Մագդա Մամացաշվիլի, որոնք արդէն կալանաւորված են։

◆ Օգոստոսի 19 ին, երեկոյեան ժամը 6 ին, Կրասինեայա փողոցում № 25 տանը յանկարծամահ է եղել Նոր Բայազէտ քաղաքի բնակիչ Բագրատ Տօպօյեանցը։ Դիակը ուղարկված է Միքայէլեան հիւանդանոցը։ Մահվան պատճառը առայժմ յայտնի չէ։

◆ Օգոստոսի 19 ին, Վօսկրեսենսկայա նրբափողոցի № 6 տանը խօլերայի նշաններով հիւանդացել է պարսկահպատակ մի կին՝ Հիբիքնազ Կարապետեանցը։ Հիւանդին ուղարկել են սուր վարակիչների բարաքը։ Բնակարանը ենթարկված է ախտահանութեան։

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԿԵԱՆՔԻՑ

◆ «Ռուս ժողովրդի միութեան» մէջ, ի նկատի ունենալով գաւառական բաժինների քայքայումը, միտք է յղացել միացնել բոլոր միապետական կուսակցութիւնները և կազմել մի միապետական կուսակցութիւն։ Միութեան պարագլուխները յոյս ունեն, որ միութիւնից անջատված բոլոր բաժանմունքները այդպիսով հնար կը լինի վերադարձնել։

◆ Իօաննիտների դէմ սկսված քննութիւնը, ինչպէս ասում են, շարունակվում է և շուտով Պետերբուրգից կանցնի քաղաքները։ Արդէն հաստատվում են նրանց պարագլուխների մի շարք խարդախութիւնները։ Օգոստոսի 9 ին Մարտիշկին գիւղում պատարագի ժամանակ, երբ Իօան Կրօնշտադտկին անէծք է կարդում իրան Յիսուսի տեղ ընդունողներին, իօաննիտների պարագլուխներից մի քանիսը բռունցքները բարձրացրած յարձակվում են նրա վրա, բայց եկւոր ուխտաւորները պաշտպանում են նրան, որի ժամանակ տուր ու դմփոց է տեղի ունենում։ («Р. У.»)

◆ Օգոստոսի 3-ին Եկատերինօսլաւում տեղի է ունեցել ջարդ իսկական ռուս մարդկանց ձեռքով։ Այդ օրը Կիեվից և Օդեսսայից եկած դրուժիննիկների մասնակցութեամբ բացվել է մի նոր ընկերութիւն «երկգլխանի արծիւ» անունով, որի ժամանակ արտասանվել են հակահրէական ճառեր։ Իսկ կիրակի օրը երեկոյեան սկսվել է ջարդը, և, ինչպէս «Рѣчь» լրագիրն է ասում, տեղի է ունենում ամենայն օր. գլխաւորապէս, Օզերնայա հրապարակի վրա, ուր ռուս մարդկանց ժողովրդական տունն ու թէյարաններն են։ Խուլիգանները ազատ կերպով 20—30 երկսեռ հոգուց բաղկացած խմբերով շրջում են քաղաքում, ծեծում են հանդիպող հրէաներին, մտնում են նրանց տները, կողոպտում ու սպանում, չեն խնայում մինչև իսկ օրօրոցի մէջ կապած երեխաներին։ Ոստիկանութեանը նրանք յայտնում են, որ չեն վախենում նրանից, որ իրանք պաշտպանում են հայրենիքը։ Ոստիկանութիւնը կալանաւորել է միայն երկու հոգու, որոնք տեղական սև հարիւրեակային խմբի անդամներն են։ Այդ մասին տեղական սև հարիւրեակային «Рус. Правда», լրագիրը նկարագրելով ջարդի մանրամասնութիւնները, հետևեալ յայտնութիւններն է անում. «Վերջին օրերս քաղաքում երևան են եկել ինչ-որ «երիտասարդներ», որոնք ռեզիններով յարձակվում են անցորդների վրա ամենաբանուկ տեղերում։ Քաղաքում լուրեր են պտտում, որ այդ անկարգութիւնների ղեկավարները Օդեսսայից եկած ինչ-որ «գաստրօլեօրներ» են»։ Թերթը իր կողմից նկատում է, որ անհրաժեշտ է այդ չարիքը իր սաղմում խեղդել։

Նոյնանման ջարդ մօտ ժամանակներս, ինչպէս յայտնի է, տեղի ունեցաւ Կիեվում ևս, որի ղեկավարները «Օդեսսայից եկողներն էին դարձեալ»։ Ուրեմն ակներև փաստ է, որ Օդեսսան մի դպրոց է հանդիսանում այսօր ամբողջ Ռուսաստանի համար խուլիգաններ պատրաստելու գործում։

◆ Մօտ ապագայում մտադրութիւն կայ բանալ 89 նոր խուզարկու ոստիկանական բաժանմունքներ։ Այդ բաժանմունքների համար կառավարիչներ պատրաստելու նպատակով Պետերբուրգ են ուղարկվում ծառայողներից ոստիկանական դեպարտամենտում բացված քրէական-խուզարկու մասի յատուկ դասընթացքներում պարապելու համար։ Այնտեղ նրանք, «Н. В.» լրագրի ասելով, կը ծանօթանան արտասահմանեան խուզարկու ոստիկանութեան նորագոյն միջոցների և կատարելագործված տեխնիկայի հետ՝ ոճրագործներին գտնելու համար։

ՄԱՄՈՒԼ

«Մշակի» ընթերցողները գիտեն, որ Եգիպտոսի հայ գաղութը կաթողիկոսական ընտրութեան պատգամաւոր է ընտրել յայտնի հայ գործիչ և գրող պ. Մինաս Չերազին։ Եգիպտահայ լրագիրներից տեղեկանում ենք, որ մի խումբ անձինք աշխատել են առաջ քշել պ. Լէօի թեկնածութիւնը, բայց քուէարկութեան ժամանակ՝ ազգային ընտրողական ժողովի 19 ձայներից պ. Մինաս Չերազ ստանում է 11 ձայն, իսկ պ. Լէօն միայն 5 ձայն. 3 ձայն ևս ստացել է դօքտոր Ն. Տաղաւարեան։ Այսպիսով պ. Չերազ հրատարակվում է Եգիպտոսի հայ գաղութի պատգամաւոր։ Սակայն ժողովի վերջում հարց է դրվում՝ ինչ անել այն դէպքում, երբ պ. Մինաս Չերազ հրաժարվի իրան առաջարկած պաշտօնից և հրաժարվի մի այնպիսի ժամանակ, երբ այլ ևս միջոց չը լինի նոր ընտրողական ժողով գումարել և նոր պատգամաւոր ընտրել։ Այդ հանգամանքը ի նկատի ունենալով, ժողովը ստիպված է տեսնում իրան որոշել 15 ձայնով, որ ի դէպս հրաժարման պ. Մինաս-Չերազի, պատգամաւոր համարվի պ. Լէօն։ Միևնոյն ժամանակ ժողովը որոշում է, որ ով և լինի պատգամաւոր, նա պարտաւոր է ձայն տալ անպատճառ ի նպաստ Մատթէոս արքեպիսկոպոս Իզմիրլեանի։

Սակայն, այժմ Կահիրէի «Լուսաբեր» թերթը, մեզ համար անհասկանալի պատճառով, մի արշաւանք է սկսել պ. Մինաս Չերազի ընտրութեան դէմ, նպատակ ունենալով ստիպել նրան հրաժարվել պատգամաւորութիւնից և ասպարէզը զիջել պ. Լէօին։ Իբրև պատճառաբանութիւն առաջ է բերում այն հանգամանքը, որ պ. Մ. Չերազ թէև կաթողիկոսական առաջին թեկնածու հրատարակել է Իզմիրլեանին, բայց երկրորդ թեկնածու ևս հրատարակել է Օրմանեանին։

Այս պատճառաբանութիւնը վերին աստիճանի անհիմն է և հէնց ինքն իրան հակասում է. եթէ Մինաս Չերազի պատգամաւորութիւնը անյարմար է նկատվում, որովհետև նա կաթողիկոսական երկրորդ թեկնածու է յայտնել Օրմանեանին, պ. Լէօի պատգամաւորութիւնը ևս առաւել անյարմար է, քանի որ նա ևս դեռ 8 ամիս առաջ այն կարծիքի է եղել, որ Օրմանեանի վարած քաղաքականութիւնը ամենախելօքն է, որ նա արժանի է ամենայն յարգանքի։ Թող «Լուսաբերը» կարդայ այն մերկացումները, որ արեց պ. Լ. Աղախանեան «Մշակի» և ուրիշ թերթերի մէջ պ. Լէօի վերաբերմամբ։

Վերջապէս, եթէ եգիպտահայ գաղութը չը կարողացաւ կամ չը կամեցաւ իր մէջ գտնել մի արժանաւոր անձն պատգամաւորութեան համար և դիմեց հեռաւոր Լոնդոնին ու Թիֆլիսին, դարձեալ ամենայարմար ընտրութիւնը պ. Մինաս-Չերազինն է, որ իբրև թիւրքահայ գործիչ, շատ լաւ ծանօթ է Թիւրքիայի հայութեան մի անջատ մասն կազմող Եգիպտոսի հայ գաղութի գործերին և բարոյական սերտ, մտերիմ կապերով շաղկապված է նրա հետ։

Վերջապէս, պ. Մինաս-Չերազ, անշուշտ, բարոյական մեծ հեղինակութիւն և ազդեցութիւն կարող է ունենալ, իբրև թիւրքահայ նշանաւոր գործիչ, թիւրքահայ պատգամաւորների վրա, քան ուրիշ որևիցէ մի անձն։

Եւ մենք ուրախ կը լինենք ողջունել պ. Մինաս Չերազին մեզ մօտ։

*

«Бирж. Вѣд.» թերթը մի խմբագրականով խիստ հետաքրքրական խորհրդածութիւններ է անում Թիւրքիայի յեղափոխութեան մասին ընդհանրապէս և Քեամիլ փաշայի յայտարարած մինիստրական ծրագրի մասին մասնաւորապէս։

Թերթը այն կարծիքն է յայտնում, որ Թիւրքիայի քաղաքական գործիչները առհասարակ, իրանց օրինակ ունենալով Ռուսաստանի ազատագրական շարժումները, ամեն կերպ աշխատում են չը կրկնել այն սխալները, ինչ որ արվեցին Ռուսաստանում։

«Ռուսաստանում այն վաղուան օրերում, —ասում է թերթը,—կոմս Վիտտէի մինիստրութիւնը ոչ մի ծրագիր չունէր, նա խլրտված երկրի առաջ դուրս չեկաւ ոչ մի ծրագրային բնաւորութիւն կրող յայտարարութեամբ և ոչ մի օրինագիծ չը մշակեց առաջին Պետական Դումային մտցնելու համար։ Թիւրքիայում բոլոր կենտրոնական վարչական բաժանմունքներում աշխատանքը եռում է օրինագծեր պատրաստելու մտքով, կաբինէտը իշխանութեան գլուխ անցնելու հէնց առաջին րօպէից որոշ ծրագիր ունի։ Եւ ինչպիսի ծրագիր։

«Եւրոպայում սովորել են մտածել, որ թիւրքահպատակի բերնով արտասանած «օրէնք» խօսքը կառավարչական պաշտօնեաների ականջներին մի ինչ որ անբարեյոյս, համարեա թէ յեղափոխական բան է հնչում։ Թիւրքիայում օրէնքը բազմաթիւ փաշաների, վալիների, կայմակամների և այլ պաշտօնեաների կամքն էր ներկայանում։ Այդպէս էր միշտ, այդպէս էր դեռ մէկ ամիս առաջ, իսկ այժմ Քեամիլ փաշայի մինիստրութիւնը յայտարարում է, թէ բոլոր այն կարգադրութիւններն ու արձակված հրամանները, որոնք հակառակ կը լինեն օրէնքի ոգուն, անվաւեր կը համարվեն։

«Քննութեան առնելով բոլոր խոստացված փոփոխութիւնները, չէ կարելի չը տեսնել, որ օսմանների կայսրութիւնը հրաժարվում է իր անցեալից և բոլորովին նոր հիմքեր է դցում իր շէնքի տակ։

«Եթէ մօտակայ տարիներում իրականութիւն ստանայ թէկուզ կէսը այն բոլոր բարի ցանկութիւնների և այն սքանչելի խոստումների, որ արտայայտված են Քեամիլ փաշայի մինիստրութեան ծրագրի մէջ, այն ժամանակ Թիւրքիան արդէն ամենաառաջնակարգ պետութիւններից մէկը կը դառնայ։

«Բայց իրականութիւն կը ստանա՞յ արդեօք այդ,—ասում է թերթը քիչ յետոյ։—Ահա դրա մէջ է կայանում հին կուլտուրական Եւրոպայի առաջարկած թիւրքիայի հանելուկը։ Այլ բան է զօրաբանակի օգնութեամբ պետական յեղաշրջում կատարելը, սահմանադրութիւն հռչակելը, գող ու աւազակ պաշտօնեաներին վռնդելը, բանտերից քաղաքական յանցաւորներին ազատելը, հաւասարութեան, եղբայրութեան և ազատութեան սկզբունքները հռչակելը, և բոլորովին այլ բան է հռչակված սկզբունքները կեանքի մէջ մտցնելը, կարգ, կանոն, օրէնք և արդարութիւն հաստատելը այնտեղ, ուր դարերով թագաւորում էին անարխիան, կամայականութիւնն ու բռնութիւնը։ Սխալված ես օսմանների կայսրութիւնից հրաշքներ սպասել, և եւրոպական պետութիւնները հէնց այդպէս էլ անում են, սպասողական դիրք ընդունելով։ Բայց արդէն հրաշք և մեծ հրաշք է և այն, որ հին կարգերը խորտակելու ժամանակ ոչ մի կաթիլ արիւն չը թափվեց։ Այդ իսկ պատճառով էլ մարդ ուզում է հաւատալ, որ շինարար աշխատանքն էլ հին Եւրոպային աւելի ևս խրատական պատկեր ցոյց կը տայ։ Մարդ ուզում է հաւատալ, բայց բանականութիւնն ու պատմական փորձառութիւնը մարդուն կասկածանքի մէջ են գցում։

«Կը սպասենք, կը տեսնենք,—այսպէս է վերջացնում թերթը իր խորհրդածութիւնները,—ճիշտ է արդեօք, որ Արևելքը կարող է նոր խօսք ասել Արևմուտքին»։

Հեռաւոր Արևելքը արդէն իր նոր խօսքը ասեց Արևմուտքին, բայց Մերձաւոր Արևելքը, դժբաղդաբար, ճիշտ այն մարդու դրութեան մէջն է ընկել, որի մասին ասում են՝ «սուտ խօսողի տունը կրակ ընկաւ, դարձեալ չը հաւատացին»։

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ*)

Թիֆլիս, 16 օգոստոսի

Ուղիղ երեսուն տարի, Թիֆլիսի Պեսկօվսկայա փողոցի վրա (№ 9), Կուր գետի ափին գտնվող Գէօրգի Պետրովիչ Իմնաձէի ջրաղացում գիշեր ցերեկ անդադրում աշխատել է Վասպուրական նահանգի Բերկրի գիւղից գաղթած մի մշակ՝ Մուրադ Աստուրեան Պետրոսեանց ազգանունով։ Երեսուն տարի գիշեր-ցերեկ ջուալներով ցորեն աղալ, լցնել մեշօկները և կրել մէջքի վրա. թող ընթերցողը գայէ, թէ դա ինչ տեսակ աշխատանք է։ Անճար մշակի երեսուն տարվայ խնայողութիւնը այն 150—200 ր. է, որ տուել է Գէօրգի Իմնաձէի հօրը—հանգուցեալ Պէտրէ աւագ քահանային, իբրև իր տիրոջը, բայց մինչև օրս որդուց չէ կարողանում ստանալ, որովհետև ստացագիր չունի, թէև բազմաթիւ վկաներ կան։ Վերջին տարիներս ապրելով ծայրայեղ չքաւորութեան մէջ, ամիսներով չունենալով անգամ լոկ թէյի, էլ չեմ ասում աշխատանքի համեմատ սնունդ՝ անճար մշակ Մուրադը յաճախ հիւանդանալով մի կերպ քարշ էր տալիս իր գոյութիւնը՝ իր մէջքին դարձեալ կրելով ծանր ջուալները։ Ահա մօտ 2 շաբաթ է, ինչ մշակ Մուրադը անօգնական և մահամերձ ընկած է անկողնում բառի իսկական նշանակութեամբ անօթի՝ ծծելով ամենախոնաւ մի նկուղի գարշահոտութիւնը։ (Ասածիս ճշմարտութիւնը ապացուցանելու համար խնդրում եմ հետաքրքրվողներին մտնել հիւանդի մօտ, Պեսկօվսկայա փողոց № 20)։ Դիակնացած հիւանդը շարունակ ղառանչում է, պահանջում է իր փողերն Իմնաձէից, երբեմն ուտել է ուզում, բայց ճրտեղից։ Անազնիւ և անբարեխիղճ տէրը մտքովն անգամ չէ անցկացնում գոնէ մի բժիշկ հրաւիրել, ցամաք հացի փող տալ և իր երեսուն տարվայ աշխատաւորին ազատել մահվան ճանկերից. մի աշխատաւոր, որը իր կեանքի ամենափայլուն օրերը սպառել է իր անգութ խաղեայինի ջրաղացում և բացի հաւատարիմ ծառայելուց հայրական խնամք է ցոյց տուել իր տիրոջ ընտանիքին։ Բայց այսօր քարասիրտ Իմնաձէն ոչ միայն չէ այցելում իր զարիբ մշակին, որ տեսնի թէ մեռա՞ծ թէ դեռ ողջ է, այլ նրա տեղ վերջնականապէս հրաւիրել է մի ուրիշ մշակ՝ 30 տարվայ բանւորին շպրտելով դէպի գերեզման կամ փողոց։ Թշուառ Մուրադը հայրենի գիւղում ունի կուրացած մայր, կին, աղջիկներ, թոռներ, որոնք 30 տարի սպասում են Մուրադին, իսկ այս սահմանադրութեան օրերին երևի համարում են օրերը, թէ երբ պիտի տեսնեն զարիբին, բայց Մուրադի կեանքի ժամերն են համարված։

Ուսուցիչ Խաչ. Տէր Ենոքեան

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿՆԵՐ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ

(Սեփ. թղթ.)

Թաւրիզ, 14 օգոստոսի

Վարակիչ հիւանդութիւնները բաւական տարածված են առաւելապէս պարսից թաղերում։ Եթէ դրութիւնը այսպէս շարունակվի, կարող են վարակվել և հայոց թաղերը, ուր մաքրութեան մասին, ներկայ շարժումների պատճառով, շատ քիչ հոգացողութիւն կայ։ Թեմական խորհրդի խնդրանօք, դօքտ Սարգիս Եղիազարեանը անցեալ կիրակի մի դասախօսութիւն տուեց Ղալայի թատերասրահում քաղաքումս գտնվող ծաղիկ, սկարլատին, տիֆ, դիֆտերիտ, կապոյտ հազ և լուծ հիւանդութիւնների մասին։ Դօքտորը խոստացաւ շարունակել իր դասախօսութիւնները։

Սալմաստ գնացող թեմական խորհրդի երկու անդամներին կարգադրված է առաջնորդարանի կողմից քննութիւն կատարել Փայաջուկ գիւղում պատահած սպանութիւնների մասին։

Իգօ

Նոր-Ջուղա, 2 օգոստոսի

«Չը նայելով որ մեր նահանգապետ Ալա-ուլ-Մուլքը մօտ 2 ամիս է որ քաղաքից հեռացել է և նրա փոխանորդ Եզզօլ-օլ-Դօվլէն դեռ չէ ժամանել այստեղ, սակայն քաղաքը բոլորովին խաղաղ է և ազգաբնակութիւնը համեմատաբար հանգիստ։ Նոր նահանգապետը սպասվում է այստեղ այս երկու օրը։ Անցեալ երկու ամիսների ընթացքում այստեղի բազարները երբեք չը փակվեցին և առևտուրը շարունակվեց սովորական ձևով։ Իշխան Զիլլի Սուլթանը Շիրազից հասաւ այստեղ և մի քանի շաբաթ մնալուց յետոյ անցեալ օրերը մեկնեց Թէհրան. իր երկու որդիների հետ միասին Եւրոպա է գնալու։

Այս տարի մեր գիւղերի հունձը շատ առատ է եղել, այնպէս, որ հաւանական է ցորենը խալվարը 4—5 թումանով վաճառվի։ Երևի գիւղացիներին և կալուածատէրերին ընդհանրապէս մեծ տխրութիւն է պատճառել այս արժանութիւնը, որովհետև ոչ կարող են նախկին տարիների արժէքներով վաճառել և ոչ էլ վաստահանում են ամբար անել։

Ս. Կատարինեան օրիորդաց դպրոցի 50-ամեակը կատարվեց շքեղ կերպով։ Տեղիս հայուհեաց բարեգործական ընկերութեան վարչութեան անդամուհիները—որոնք ամենքն էլ նոյն դպրոցի նախկին սաներից են—ինքնաբերաբար հանգանակութեան դիմեցին «անձեռնմխելի դրամագլխի» անունով։ Ինչպէս լսում եմ, մինչև այժմ հանգանակել են մօտ 300 թուման, իրանք էլ յատկացրել են 50 թուման։ Լսում եմ, որ հանգանակութիւն է սկսվել Ջավայում և Հնդկաստանում նոյն նպատակի համար։

Մեր ազգային երկսեռ դպրոցները բացվեցին երէկ։ Ուսուցչական կազմը մնում է անփոփոխ։ Աշակերտ-աշակերտուհիների թիւը 600-ից անց է։

Յուլիսի 9 ին հողին յանձնվեց այս թեմի ամենայայտնի հոգևորականներից մէկի—Պսակ քահանայ Յակոբջանեանի մարմինը։ Հանգուցեալը այս թեմի ամբողջ քահանայական դասի մէջ իր ջերմ կրօնասիրութեամբ, պարկեշտ վարքով և ճշմարիտ հոգևորականին յատուկ քնքոյշ քաղաքավարութեամբ գրաւել էր իր ժողովրդի և ծանօթների համակրանքը և մի եզակի դէրք։ Մօտ 40 տարի գործել էր ազգային-կրօնական-կրթական ասպարիզում թէ այստեղ, թէ Հնդկաստանում։ Նա անկեղծ և նուիրված հոգևորական էր և հաստատ, անաչառ և անկաշառ գործիչ։ Նրան աւելի լաւ էին ճանաչում և նրա արժանիքները աւելի լաւ գնահատում Հնդկաստանում հայերը և եւրոպացիները, քան թէ իր ծննդավայրում. չէ՞ որ «մարգարէ ի գաւառի իւրում պատիւ չունի»։ Այստեղի մեր ազգային հաստատութիւնների ներկայացուցիչները և մեր «ազատամիտ-ինտելիգենտները» ոչ մի կերպ չը մասնակցեցին նրա յուղարկաւորութեանը. չը գտնվեց մէկը որ մի փունջ ծաղիկ դնէր նրա դագաղի վրա իբրև երախտագիտութեան ցոյց։ Սակայն ապերախտութիւնը մեր հին ցաւերից մէկն է։

Տեղացի

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐԸ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ՀԵՌԱԳՐ. ԳՈՐԾԱԿԱԼ.

19 օգոստոսի

ՕՍՏԱՇԿՕՎ։ Առաւօտեան քաղաքից 8 վերստ հեռաւորութեան վրա 3 չարագործներ յարձակվել են պօստի վրա։ Նամակատարը ծանր վիրաւորված է։ Փօստը ամբողջ է։ Կառապանին և նամակատարին աջողվել է առաջ գնալ։

ԽԱՐԿՕՎ։ Տեղիցս Սիբիր մեկնեցին 322 խօղօկներ։

ՐԵԱԶԱՆ։ Սպասսկի գաւառի Գաւրիլօվսկայա գիւղում հրդեհը ոչնչացրել է 173 տուն. վնասը հասնում է մօտ 100,000 րուբլու։

ՌՕՍՏՕՎ Դ./Վ.։ Երէկ քաղաքապետութեան մէջ հիւանդացան խօլերայով 22, մեռան 19 ը. ընդամենը համաճարակի սկզբից հիւանդացել են 484, մեռել են 213 հոգի։ Խօլերան երևացել է Դօն գետի ակունքի կօզակների գիւղերում։ Յատուկ մասնաժողովը որոշեց Ռօստօվ-Կալաչ տարածութեան վրա հիմնել խոլերային բարակներ և բժշկական կէտեր։

---

*) Այս նամակս (աննշան տարբերութեամբ) ամսիս 9-ին տարայ «Զանգակի» խմբագրատուն, բայց աշխատաւորական թերթը չը տպագրեց։ Ինչո՞ւ։ Խ. Տ.-Ե.

ԼՕՁ։ Սխալ է գերմանական լրագիրների Լօձից հաղորդած այն լուրը, թէ Վիձևսկի փողոցում պահապանը մեռաւ ասիական խոլերայից։

ՍԱՄԱՐԱ։ Ուսուցիչների փոխադարձ օգնութեան ընկերութիւնը կազմակերպում է կարճատև դասընթացքներ նորագոյն գրականութեան և բնագիտութեան։

ՕՄՍԿ։ Երկրագործական գործիքների գործարանում գիշերը հրդեհ ծագեց, որ ոչնչացրեց ամբողջ գործարանը։ Վնասները հասնում են 150,000-ի։ Գործարանը ապահովագրված է 68,000-ով։ Մօտ 300 բանւորներ մնացին անգործ։

ԲԵՐԼԻՆ։ «Nord. Alg. Zeit»-ը գրում է. «Ինչպէս մենք տեղեկացանք, կայսերական կառավարութիւնը իր հաւատարմատարների միջոցով տեղեկացրել է Ալժեզիրասի արձանագրութիւնները ստորագրող պետութիւններին, որ կայսերական կառավարութիւնը նկատի առնելով Մարոկկոի իրերի նոր դրութիւնը, իր պարտքն է համարում մատնանշել պետութիւններին, որ Մուլէյ-Հաֆիդին շուտափոյթ կերպով սուլթան ճանաչելը սերտ առնչութիւն ունի մարոկկեան գործերի դրութիւնը վերջնականապէս կարգաւորելու հետ։

ՆՈՐԴԵՐՆԷՅ։ Ժամանեց բուլղարական մինիստր նախագահը և երկարատև խօսակցութիւն ունեցաւ պետական կանցլեր Բիւլօվի հետ։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ Ա. ՔԱԼԱՆԹԱՐ
Ց. ՏԷՐ-ՄԱՐԿՈՍԵԱՆ
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
ԲԺՇԿԱՊԵՏ Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ
Հիմնված 1880 թ.
(Կուկիա, Վօրոնցօվի արձանի հանդէպ)
Ամեն օր, բացի կիրակի օրերից
ԱՌԱՒՕՏՆԵՐԸ

Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան և վեներական (սիֆիլիս) հ.։

Կ. Մ. ՉԻԿՕՎԱՆԻ—$9^{1}/_{2}$—10 ժ. ներքին և նեարդային։

Զ. Ի. ԲԱԲԱՆԱՍԵԱՆՑ—10—11 ժ. մանկաբարձութեան, կանանց և երեխայոց հ.։

Ն. Տ. ՄՈՒԼԻՆ—10—12 ժ. ականջի, կոկորդի և քթի հիւ.։

Մ. Գ. ԱՒԵՏԻՍԵԱՆ—11—12 ժ. մորթու, վեներակ., վիրաբուժութեան և միզասեռ.

Ա. Մ. ՓՈՒՂԻՆՕՎ—12—1 ժ. ներքին և երեխայոց հիւ. և ծաղկահատ.։

Ա. Գ. ՆԱՐԱՊԵՏԵԱՆՑ—1—$1^{1}/_{2}$ ժ. ներքին և երեխայոց հ.։

ԿԻՆ-ԲԺԻՇԿ Ա. Ի. ՇՉԵՐԲԻՆԻՆԱ—$1^{1}/_{2}$—2 ժ. մանկաբարձութեան։

Գ. Ե. ԳՈՒՐԳԵՆՕՎ—12—$12^{1}/_{2}$ ժ. կանանց և մանկաբարձութեան։

ԵՐԵԿՈՆԵՐԸ

Ի. Յ. ՄԱՐՑԻՇԵՎՍԿԻ—$5^{1}/_{2}$—$6^{1}/_{2}$ ժ. ներքին և երեխայոց հիւ. և ծաղկահատ.։

Ա. Ե. ԳՐԻԳՈՐԵԱՆ—6—7 ժ. վիրաբուժ.,

Վճարը 50 կ.։ Չքաւորները ձրի։ Համախորհրդի (կոնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։

Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ Բ. Նաւասարդեան

Հրատարակութիւն Աւետիս Փօղոսեանի հրատարակչական ֆօնդի
Լոյս տեսաւ

ՓՈՆՋԻԿ

մանկական երգարան եւրոպական նոտաներով
Նիւթ հայ դպրոցների I, II և III բաժանմ.
Կազմեց ԱԶԱՏ ՄԱՆՈՒԿԵԱՆՑ
Գինն է 30 կոպ.։

Դիմել «Գուտտենբերգ» և «Փարոս» գրախանութներին և կազմողին՝ Նորաշէնի օրիորդաց դպրոց, Дворянская № 17.
(ապ.) 10—3

Սրանով առաջարկում եմ Գանձակ նահանգի Կարեագինի գաւառի Հադրութ գիւղի բնակիչներին՝ Ալէքսան Մադունցեանին, Գրիգոր Ասլանեանին և Եփրեմ-Սրապեանին, որ այդ պարոնները, այս յայտարարութիւնը լոյս տեսնելուց մի ամսվայ միջոցում, յետ վերադարձնեն իմ հօրս՝ Մանաս Գրիգորեանին 1906 թ. մայիսի 2-ին բռնութեամբ և սպառնութեամբ վերցրած 1000 ռուբ. պարտամուրհակները և 10,000 ռուբ. գրաւականի ստորագրութիւնը, որոնք ներկայումս գտնվում են Մադունցեանի մօտ։

Վլադիվոստոկ, 20 յուլիսի 1908 թ.
Խնդրով Մանասեան Գրիգորեանց
(օ. մ.) 5—3

Դպրոց եւ Մանկական պարտէզ

Ե. Ս. Յարութիւնեանի

Երկու սեռի մանուկներ պատրաստվում են բոլոր միջնակարգ դպրոցների համար։
Ընդունելութիւնը օգոստոսի 25-ից։
Ուսումը սեպտեմբերի 1-ից։
(21,23,24,26,28,30,31, 2,5,7) 10—1

Թիֆլիսի Կենտրոնական Գրավաճառանոցում

վաճառվում են

Ադամեան Գ. ա. ք. Աղօթատետր	10 կ.
» Կարգ Աստուածպաշտութեան	50 կ.
Երզնկեանց Եզ. ա. ք. Դասատետր կրօնի, Ա. տ.	20 կ.
Բ. տ. հին ուխտ	30 կ.
Գ. տ. Նոր ուխտ	30 կ.
Երզնկեանց Գր. ա. ք. Քրիստոնէական բարոյագիտութիւն	50 կ.
Մարտիրոսեան Յ. ա. ք. Եկեղեցական պատմութիւն	40 կ.
Տէր-Ստեփանեան, Սկզբունք քրիստոնէական հաւատոյ	60 կ.
Տէր-Գաբրիէլեան, Քրիստոնէական վարդապետութիւն	30 կ.
Կոստանեան Կ. Ծաղկաքաղ մ. ա.	25 կ.
» » մ. բ.	35 կ.
» » մ. գ.	40 կ.
Ղուկասեան, Գրաբարի քերականութիւնը	50 կ.
Մալխասեան, Գրաբարի համաձայնութիւնը	50 կ.
Նազարեան, Հայոց լեզուի ուսուցիչ գ. տ.	40 կ.
դ. տ.	60 կ.
» Ընտիր հատուածներ մ. Ա. արձակ գրուածքներ	80 կ.
մ. Բ. բանաստեղծութիւններ	80 կ.
Երզնկեան, Թւաբանական խնդիրներ և օրինակներ ա. և բ. տ.	30 կ.
գ. և դ. տ.	35 կ.
Երզնկեան, Աշխարհագրութեան տարրական դասընթացք, Հայաստանի աշխարհագրութեան համառօտ տեսութ.	60 կ.
Պալասանեան, Պատմութիւն հայոց, սկզբից մինչև մեր օրերը	1 ր. 50 կ.
Վանցեան Գր., Համառօտ պատմութիւն հայոց	50 կ.
Վինօգրադօվ, Ընդհանուր պատմութիւն հին դար	1 ր.
» միջին դար	1 ր.
» նոր դար	1 ր.
Ֆոստէր, Բնախօսութիւն, դպրոցական դասընթացք	30 կ.
Բահաթրեան, Ուղեցոյց հայ ուսուցչի	1 ր.
Երզնկեան Գր. ա. ք. Դասաւանդութեան խորհրդածութիւններ	30 կ.
» Մանկավարժութեան պատմութիւն	1 ր.
Մանդինեան, Համառօտ մանկավարժութիւն	1 ր. 50 կ.
Տէր-Աստուրեան Հայկ, Պատմութիւն հայոց	45 կ.
Տէր Սարգսեան, Գեղագրութեան դասաւանդման եղանակը	20 կ.
» Գեղագրութեան օրինակներ	30 կ.
Տէր-Միրաքեան, Ժողովրդական դպրոցի մեթօդիկա	1 ր. 50 կ.
» Դասաւանդութեան ուղեցոյց	1 ր.
Աթանասեան, Բնագիտութիւն	65 կ.
Աբեղեան Ա. Ընդհանուր աշխարհագրութիւն	70 կ.
Բարայեան, Դասագիրք ընդհանուր աշխարհագրութեան	65 կ.
Գրիգորեան, Բնագիտութիւն	60 կ.
» Մարդակազմութիւն	60 կ.
Քիշմիշեան, Համառօտ բուսաբանութիւն	30 կ.
» Նախագիտելիք բուսաբանութեան	80 կ.

Նոյն գրատանը վաճառվում են

Ս. ա. ք. Սահակեանի կրօնի դասագրքերը, Ա. ա. ք. Բագրատունու գրքերը, Աղայեանց Ղազարոսի, Աբեղեան Մանուկի, Աբաջեան Յովհաննէսի, Թումանեանց Յ., Սարգսեան Լ., Վանցեան Գր. և Տէր-Ղեւոնդեանց Նիկ. հայոց լեզուի դասագրքերը։ Ջոհրաբեան Յ., Սպարապետեան Ա., Հենչելի և Փորսուղեանի Թւաբանութեան դասագրքերը։
(հ.) 4—3

Ց. Ց. Դեսլեր տեխնիքական

գրասենեակը Պետերբուրգում
Невскій 164, Телегр. адр. „Техдеслеръ“.

Ամենաէժան առիթ ձեռք բերելու նոր և գործածութեան մէջ սակաւ եղող մեքենաներ, [illegible], լօկօմօբիլներ, կէր. և նաւթի ու գազի շարժիչներ, մօտօրային մակոյկներ, շոգենաւեր և մետալներ։
Պահանջեցէք ցանկեր.
(18, 22, 25, յուլ. 1, 11, 21, 30, օգ. 10, 20, 30) 10—8

Լոյս տեսաւ և վաճառվում է
Ա. ԱԹԱՆԱՍԵԱՆԻ

ԴԱՍԱԳԻՐՔ

ԲՆԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ
մարդ, կենդանի, բոյս և հանք

Դասընթացք հայոց ժողովրդական և քաղաքային դպրոցների III, IV և V տարիների համար։
Հիմնովին բարեփոխած, հարստացրած նոր նիւթերով և մօտ 130 նկարներով։
Գինն է 70 կ.

Դիմել Թիֆլիս Աշ. Աթանասեանին «Խաթաբալայի» խմբագրատուն, կամ «Գուտտենբերգ» գրախանութին։
10—1

Մերվի հայոց ծխական երկսեռ դպրոցի համար
հարկաւոր է

ԵՐԿՈՒ ՈՒՍՈՒՑԻՉ

1) Շաբաթական 23 դաս. (հայոց լ. 11, թւաբան. 5, նկարչ. 5, վայելչ. 2։ 2) Շաբաթական 23 դաս. (կրօն 6, պատմ. 2, իրազն. 4, բնակ. գիտ. 3, աշխարհ. 2, երգ. 6, և պիտի պատրաստէ ու ղեկավարէ երգեցիկ խումբ եկեղեցու համար։

Պայմանները՝ իւրաքանչիւրին 700 րուբլի ռոճիկ. ճանապարհածախք, ծառայ, բնակարան և վառելիք մտնում են որոշված ռոճիկների մէջ։

Ցանկացողները կարող են դիմել հոգաբարձութեան հետևեալ հասցէով՝ Попечителю А. Аветисяну. (21, 23, 26) 3—1

ԴՎՕՐՑՕՎԵԱՆ

ՆՈՄԵՐՆԵՐ

Քաղաքի կենտրոնում, Դվօրցօվայա փողոցի վրա։ Համարները նոր վերանորոգված են ամեն մի յարմարութիւններով և մաքրութեամբ։ Համարի վճարը օրով, նոյնպէս և ամսական՝ մեծ զիջմով։ Ծառաներն ուշադիր և ամեն մի պատուէր շուտափոյթ կատարող։ Ունի տէլէֆօն և մաքուր խոհանոց։

Այդ շինութիւնը բանկի համար յատկացնելու լուրը անհիմն էր։

Կառավարիչ՝ Զ. Սաղաթէլեան
(21, 24, 28, 31) 4—1

ԵՐԶՆԿԵԱՆՑ ԳՐԻԳՈՐԻՍ ԱՒԱԳ ՔԱՀԱՆԱՅԻ

ԹՒԱԲԱՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ
և
ՕՐԻՆԱԿՆԵՐ

ըստ Գօլդենբերգի

I և II տարի, 9 րդ տպ. . . .	30 կ.
III և IV » 5 » . . .	35 կ.

«ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆ»

Տարրական, Հայաստանի աշխարհագրութեամբ.	60 կ.

ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ ԲԱՐՈՅԱԳԻՏՈՒԹԻՒՆ

Նոր ուղղութիւն, միջնակարգ բարձր դասարանների համար . . .	50 կ.

Բոլորը ընդունված հայ դպրոցներում
Զեղչը — 20 %

Պահեստը՝ կենտրոնական գրավաճառանոց (Тифлисъ, Центр. книж. магазинъ).
(հ. կ.) 6—4

ԴՊՐՈՑ-ՊԱՆՍԻՕՆ և ՄԱՆԿԱԿԱՆ ՊԱՐՏԷԶ
Ս. Վ. Արղութեան-Երկայնաբազուկի
(Միքայէլեան պր. № 138. ս. տ.)

Երեխաների ընդունելութիւնը օգ. 28-ից։ Պարապմունքները կը սկսվեն սեպտ. 2-ից։ Երեխաները պատրաստվում են մինչև III դաս.։ Աղջիկները մինչև V դաս. բոլոր միջնակարգ դպրոցների համար։ Դպրոցին կից կայ ձեռքի աշխատանքի դասաբան։
13, 17, 24 6—3 21, 29, 31

Թելէթ ԳԻՒՂԻ եկեղեցական-ծխական դպրոցի համար հարկաւոր է
մի հմուտ

ՈՒՍՈՒՑԻՉ

Ցանկացողները պէտք է դիմեն հայոց կոնսիստորիայի դիւանատուն՝ յիշեալ գիւղի ուխտատեղիի վանահօրը՝ Դիօնէսիոս վարդապետին։
(21, 23, 26) 3—1

ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՄԻՆԻՍՏՐՈՒԹԵԱՆ ԻՐԱՒԱՍՈՒԹԵԱՆ ՏԱԿ ԳՏՆՎՈՂ

ՀԱՇՒԱՊԱՀՈՒԹԵԱՆ ԿՈՒՐՍԵՐ

ՆԻԿՈՂԱՅՈՍ ԱԲՐԱՀԱՄԵԱՆԻ

Հեղինակ «Առևտրական, գործարանական և նաւթարդիւնաբերութեան հաշւապահութեան ձեռնարկի», որ ֆինանսների մինիստրութեան ուսումնասիրական բաժնի կողմից ընդունված է իբրև օժանդակ ձեռնարկ առևտրական դպրոցներում և նրանց գրադարաններում։

Սովորեցնում և պատրաստում են

ԵՐԿՈՒ ՍԵՌԻ անձանց, գործնական ձևով հաշւապահութիւն և ուրիշ մասնագ. առարկ.

Ներկայ տարվայ կուրսերում բացի սովորական մասնագիտական առարկաներից աւանդվելու է ձրիաբար քաղաքական տնտեսութիւն (политическая экономія) և որոշ վճարով կամաւոր սղագրութիւն (стенографія)։

Ընդունելութիւնն ամեն օր, ժամը 4-ից մինչև 7-ը երեկոյեան, 9-ից մինչև 10-ը առաւօտեան։ Պարապմունքները սկսվելու են 1908 թ. սեպտեմբերի 15-ից, պարբերաբար ամեն 4 ամիս, ամենայն օր ճաշից յետոյ։ Ծրագիրը ուղարկվում է ձրի։

Դասընթացքը աւարտողներին տրվում են, ֆինանսների մինիստրութեան թոյլատրած ծրագրի համաձայն, ատտեստատներ։

Դրանից անկախ՝ բացված է քիչ պատրաստականութիւն ունեցող անձերի համար առանձին լրացուցիչ և կրկնողութեան կուրսեր ռուսաց լեզուի և թւաբանութեան համար։

Ցանկացողներին խնդրում են դիմել գրաւոր կերպով կամ անձամբ կուրսերի հիմնադրին Թիֆլիսում. Н. В. Абраамяну, Николаевская ул., № 22, ամեն օր։ Վերևում յիշած ձեռնարկը ծախվում է Ռուսաստանի բոլոր գրավաճառանոցներում։ Օտարաքաղաքացիները գիրքը գնելու համար կարող են դիմել հեղինակին, առանց պօստի ծախս վճարելու։ ԳԻՆՆ է 3 ր. 50 կոպէկ։ 20—10
(կ. ե. հ.)

ԼԻԱԿԱՏԱՐ ԲԺՇԿՈՒԹԻՒՆ

Լիակատար բժշկութիւն **ՍԻՖԻԼԻՍԻ** և նրա հետևանքների

Ի. Ավրախովի ԵՂԱՆԱԿՈՎ

Որպէս բժշկվել սիֆիլիսից բոլոր շրջաններում և ձևերում նրա հետևանքներից, այսինքն կաթուածներ, տաբէս, ոսկրացաւ, բծեր, վէրքեր և այլն, նոյնպէս խլացաւ և էկզէմա։

Բժշկութիւն առանց սնդիկի և եօդի անվնաս բուսական բալզամով։

Կատարեալ բժշկութիւն 2—4 շաբաթում առանց վերադարձների։ Բրօշիւրը ուղարկվում է երբ 7 կոպէկանոց մարկաներ ուղարկելուց։ Շատ կան նօտարով վաւերացրած շնորհակալութիւններ և բժիշկների վկայականներ։

Հեղինակի մօտ կարելի է ստանալ ձրի՝ С.-Петербургъ, Колокольная ул., № 1 1, собств. домъ.

ՀՆԴԿԱԿԱՆ ԲԱԼԶԱՄ ծախվում է միմիայն Դ. ԱՎՐԱԽՈՎԻ մօտ СПБ. Колокольная ул., № 11,
00—15
(հ. ե.)

ՍԻՖԻԼԻՍԻ

1860
Т.Р.А.Р.М.
С.ПЕТЕРБУРГЪ.
ТОВАРИЩ. РОСС-АМЕРИКАНСК. РЕЗИН. МАНУФАКТ.
RUSSIAN-AMERICAN.INDIA RUBBER

1865 թ. 1870 թ. 1882 թ. 1896 թ.

ԿՐԿՆԱԿՕՇԻԿՆԵՐ

1860.
Т.Р.А.Р.М.
С.ПЕТЕРБУРГЪ.

Իսկականները միայն այս դրօշմով

ՌՈՒՍ-ԱՄԵՐԻԿԱԿԱՆ ՌԵԶԻՆԻ ՄԱՆՈՒՖԱԿՏՈՒՐԱՅԻ
ԸՆԿ. Ս.-ՊԵՏԵՐԲՈՒՐԳՈՒՄ

ԼՐԻՒ ԵՐԱՇԽԱՒՈՐՈՒԹԻՒՆ
լաւ յատկութեան համար

ՊԵՏԵՐԲՈՒՐԳՈՒՄ
ՄՈՍԿՎԱՅՈՒՄ
ՌԻԳԱՅՈՒՄ
ԿԻԵՎՈՒՄ
ՎԻԼՆԱՅՈՒՄ
ԽԱՐԿՕՎՈՒՄ
ՕԴԵՍՍԱՅՈՒՄ
ՌՕՍՏՕՎՈՒՄ Դ/Վ
ԿԱԶԱՆՈՒՄ
ՎԼԱԴԻՎՕՍՏՕԿՈՒՄ
ԵԿԱՏԵՐԻՆԲՈՒՐԳՈՒՄ
ԻՐԿՈՒՏՍԿՈՒՄ
ԹԻՖԼԻՍՈՒՄ
ՏԱՇԿԵՆՏՈՒՄ
ՍԱՐԱՏՕՎՈՒՄ
ՊԵՐՄՈՒՄ

ՄԵԾԱՔԱՆԱԿ ՎԱՃԱՌՔԸ
կատարում է
„ԼԷՕՊՈԼԴ ՆԷՅՇԷԼԼԵՐ“
ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ՏՈՒՆԸ Նիժեգօրօդեան և Իրբիտեան տօնավաճառներում
(հ. կ.) 50—5

ԺԱՄԱՑՈՅՑ
KAVALIER

Ընդառաջելով գնողների ցանկութեան՝ ունենալ ճիշտ և իսկական ժամացոյց էժան գնով, մենք վճռեցինք տալ 3 ր. 95 կ.-ով տղամարդկանց բաց տափակ ժամացոյց «KAVALIER», վերջին կատարելագործութիւններով ժամացոյցային մեխանիզմի մէջ։ Կորպուսը փայլուն մուգ-կապոյտ գոյնի է։ Ցիֆերբլատը մետաղական ոսկեզօծված կամ արծաթազօծված։ Սլաքների ուղղութիւնը՝ գլխի վրա։ Ընթացքը՝ խնամքով ստուգված, որի մասին տրվում է երաշխաւորութիւն։

Պատուէրները կատարվում են անմիջապէս պահանջը ստանալուց յետոյ։

Առաքման համար վերցվում է գնողներից
Եւրոպական Ռուսաստան 50 կոպ.
իսկ Ասիական » 75 կոպ.

Պատուէրներն ուղարկել՝ Торговому дому

Московскій Центральный Складъ Часовъ.

Москва, д. Виноградова № 126.

Յ. Գ.—Կանխավճար ուղարկողներին, դրամով կամ մարկաներով, ձրի տրվում է ժամացոյցի շղթայ տղամարդի կամ կնոջ։ 30—9
(հ. կ.)

Большая Банская ул. № 3.

Типографія „Экономія“ Ав. Мугдусіакопова съ С-ми